

Երեւոյն այսպէս

**ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՏԻՒ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐՈՒ**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին՝ ծննդյան 70-ամյակի առիթով



Մարտի 8-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհաւորագիր է հղել Ն. Ս. Օ. Ս. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին՝ ծննդյան 70-ամյա հոբելանսի առիթով:

Նույն օրը Ամենայն Հայոց Ծայրապետը նաեւ հեռախոսազրոյց է ունեցել Արամ Ա Կաթողիկոսի հետ եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընթացող Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողովի մասնակիցների անունից շնորհաւորանքներ եւ բարեմաղթանքներ փոխանցել նրան:

Հայոց Հովակատը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին մաղթել է կենաց արեւշատություն եւ արդյունազարդ գահակալություն՝ ի պայծառություն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինութեամբ կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

Նշան վրդ. Հմայակյանը, ազատվելով Հառիճի Թրքանճյան հոգեւոր ընծայարանում ստանձնած պարտականություններից, նշանակվել է Հառիճի Թրքանճյան հոգեւոր ընծայարանի տեսուչ:

Դեռնոյ աբղ. Սաղաթէյանը, ազատվելով Գետրոյան հոգեւոր ճեմարանում ստանձնած պարտականություններից, նշանակվել է Հառիճի Թրքանճյան հոգեւոր ընծայարանի տեսուչ:

ԸՆԿՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի արքային գործերի նախարարին

9 մարտի

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոս Կոցիասի գլխավորած պատվիրակութեանը՝ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Կարեն Նազարյանի եւ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց երկու ժողովուրդների միջեւ առկա դարավոր բարեկամական հարաբերություններին, որոնք ամուր հիմք են հանդիսանում այսօր երկու երկրների արդյունավետ գործակցության համար:

Նորին Սրբությունը նախարարին ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական դերակատարությունը հայ ժողովրդի կյանքում՝ մասնավորապէս խոսելով խորհրդային տարիներին Եկեղեցու դիմագրւած ողբարարությունների, ինչպէս նաեւ ներկայիս իրականացվող առաքելության եւ առկա մարտահրավերների մասին:

Վեհափառ Հայրապետը գոհունակութեամբ անդրադարձավ Հայ Առաքելական եւ Հույն Ողորդական Եկեղեցիների եղբայրական կապերին եւ Հունաստանի ու Մայր Աթոռի միջեւ ձեւավորված սերտ գործակցությանը, որի շնորհիվ Մայր Աթոռի միաբաններն իրենց հոգեւոր



բարձրագոյն կրթություն են շարունակում Հունաստանի համալսարաններում:

Իր հերթին Հունաստանի արտաքին գործերի նախարարը զրույցի ընթացքում խոսեց ժողովուրդների կյանքում Եկեղեցիների կարեւոր առաքելության մասին: Վերջինս ընդգծեց, որ Եկեղեցին կարեւոր ծառայություն է իրականացնում՝ նպաստելով հասարակության մեջ ազգային ինքնության եւ բարոյական արժեքների պահպանությանը, հանդուրժողականության,

համերաշխության եւ լավատեսության ոգու սերմանմանը եւ մարդկության ապահով կյանքի տեսլականի ձեւավորմանը:

Հանդիպման Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ պրն. Նիկոս Կոցիասն անդրադարձան նաեւ Մերձավոր Արեւելքում տիրող ցավալի իրավիճակին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրէն Նաթան արք. Հովհաննիսյանը:

10 մարտի

Հունգարիայի կաթոլիկ համալսարանի դասվիրակությանը



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի ղեկավար պրոֆ. Սուրոմի Սաբոլցի գլխավորած պատվիրակութեանը՝ ուղեկցությամբ Երեանի հ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ղեկավար պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի:

Պատվիրակության կազմում էին համալսարանի պատմության ինստիտուտի տնօրէն Ուգե Շանդորը, ղեկավարի խորհրդական, Ազգային գրադարանի գլխավոր տնօրէն Լասլո Տուսկը եւ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Բալինտ Կովաչը:

Հանդիպման սկզբում տիրաւ Ռ. Սիրզախանյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց իյուրերին՝ տեղեկացնելով, որ այցը

Հայաստան կազմակերպվել է 2016 թ. Պ. Պազմանի անվան կաթոլիկ եւ հ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանների միջեւ համագործակցության պայմանագրի կնքմամբ սկզբնավորված գործակցության շրջանակներում: Մանկավարժական համալսարանի ղեկավարը գոհունակութեամբ նշեց, որ հաստատված կապերի շնորհիվ կաթոլիկ համալսարանում արդեն գործում է հայագիտական ամբիոն:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրինությունն ու գնահատանքը փոխանցեց հունգարական պատվիրակությանը՝ ուրախություն հայտնելով պատվիրակության անդամներին Ս. Էջմիածնում վերստին իյուրընկալելու առիթով:

Հայոց Հովակատը գոհունակութեամբ անդրադարձավ երկու հաստատությունների միջեւ ձեւավորված կապերին՝ ընդգծելով, որ նման սերտ փոխհարաբերություններն ավելի մեծ թվով ուսանողների հնարավորություն են ընձեռում մասնակցելու համատեղ իրականացվող ծրագրերին եւ այդպիսով նպաստում փոխադարձ ճանաչողության ու երկու ժողովուրդների միջեւ բարեկամության զորացմանը:

Այս առումով Նորին Սրբությունը մեծապէս կարեւորեց Հունգարիայի կաթոլիկ համալսարանում հաստատված հայագիտական ամբիոնի առաքելությունը՝ Մայր Աթոռի պատրաստակամությունը հայտնելով անհրաժեշտ գործունեությամբ աջակցելու նրան:

Խոսք սասց նաեւ պրոֆ. Սուրոմի Սաբոլցը՝ իր հերթին ուրախութեամբ տեղեկանելով համագործակցության արդյունքում արձանագրված հաշտությունների մասին եւ ներկայացնելով հայագիտական ամբիոնի զարգացման տեսլականը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց կրթական հաստատությունների գործունեությանը, մասնավորապէս՝ ուսանողների փոխանակման ծրագրերին: Այս առիթով Ամենայն Հայոց Ծայրապետը պրոֆ. Սուրոմի Սաբոլցին հրապարակեց դասախոսություններով հանդես գալու Գետրոյան հոգեւոր ճեմարանում:

Վերջում Գարեգին Բ Կաթողիկոսը երկրների ու ժողովուրդների միջեւ առկա հարաբերություններին էլ ավելի գորացնելու մաղթանքով կրթական հաստատությունների ղեկավարներին ցանկացավ արդյունավետ գործակցություն:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրէն Նաթան արք. Հովհաննիսյանը:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀՃՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՐՏԻ 8-Ի ԿԸՆԱՏՆՅ ՏՈՒՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունը, սերն ու գնահատանքն ենք բերում մեր սիրելի մայրերին, քույրերին և դուստրերին՝ շնորհավորելով մարտի 8-ի տոնակա առիթով:

Դարեր շարունակ Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք ազգային մեր կյանքից ենք առանձնակի նվիրական առաքելություն են իրականացրել՝ կրթելով հավատավոր, հայրենիքի նվիրյալ արհասիրտ որդիներ և առաքինազարդ դուստրեր: Նրանք իրենց ամենը ունեցել և արծաթից առավել զարդարել են պարկեշտությամբ և պատկառանքով, մայրական սիրով սերունդներին և փոխանցել հայրենի պատմությունը՝ չեն և ամուր պահելով հայ բնամայրը:

Սիրելի՛ տիկնայք եւ օրհորդներ, ուրախ ենք, որ այսօր բարեպաշտ նույն ոգով ու նվիրվածությամբ շարունակում եք աստվածապարզել մեր շնորհներով ջանքեր ներդնել՝ հանուն երիտասարդ սերնդի դաստիարակության, մեր երկրի գործացման և մեր ժողովրդի կենսաջ հարստությունը:

Մեր մայրամբն է, որ երկնավոր Տերը Ամենօրհնյալ Սրբուհի Աստվածամոր բարեխոսությամբ բաշխի ձեզ կանացի և մայրական բերկրային անուպատ երջանկություն, քաջատոջություն, լիախնդրություն և անասանություն՝ մեր կյանքի և առաքելության ընթացքին:

Աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ Իր Ամենագոր Աջի հովանու ներքո պահի, պահպանի ձեզ և մեր քննադատ անդամներին, ամբապնդի ամենքիդ՝ հույսի, հավատի և սիրո աստվածային առաքնություններով մեզ:

«Շնորհք, սեր և խաղաղություն Տեսնո մերոյ Յիսուսի Բրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսանդ, ամեն»:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով



Մարտի 7-9-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շարապույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը՝ ընդլայնված կազմով: Ժողովի նիստերն ատենապետեցին ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ հաժակ արք. Պարսամյանը եւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Յովնան արք. Տերտրյանը:

Օրակարգում ընդգրկված էին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու կանոնական, թեմական ու համայնքային բազմաթիվ հարցեր:

Ժողովի սկզբում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության կանոնադրական քննարկումների կազմակերպման գործընթացի շուրջ վերջին շրջանում տեղ գտած իրադարձություններին: Նորին Սրբությունը Գրչի անդամներին տեղեկացրեց փետրվարի 23-24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցած հանդիպումների մասին և անհրաժեշտ լուսաբանություններ տվեց ստեղծված իրավիճակի ու դրա հանգուցալուծման ուղղված երկօրյա քննարկումների ընթացքում առկա զրոյությունների վերաբերյալ:

Առաջին օրը Գրչի անդամներին Հայոց Եկեղեցու գործառնությունների բարեխղճական ծրագրի

խարհական թեկնածուների ընտրության կարգը եւ հարցաշարի բովանդակությունը:

Ներկայացված արդյունքների քննարկումից հետո Վեհափառ Հայրապետը Գերագույն հոգեւոր խորհրդի անունից գնահատանք հայտնեց տիրար Աստ Դավիթյանին եւ ծրագրի գործադիր ու խորհրդատվական մարմինների անդամներին՝ կատարված աշխատանքի համար:

Նիստին Գերագույն հոգեւոր խորհուրդը քննարկեց Ազգային-եկեղեցական ժողովի՝ 1945 թվականին գործադրության մեջ դրված կանոնադրության լրամշակված նախագիծը՝ պատրաստված Կանոնադրությունների մշակման հանձնախմբի կողմից: Նախագիծն հետ առնչված անհրաժեշտ լուսաբանություններ տվեցին հանձնախմբի անդամներ Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը եւ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեորգ Դանիելյանը:

Փաստաթղթերի քննությունից հետո Գրչի անդամները գոհունակությամբ ողջունեցին իրականացված աշխատանքը եւ թեկնածուների ավարտին հասցնել գործընթացը՝ հույսով ամսին գումարվելիք եկեղեցական-ներկայացուցչական ժողովին նախագիծը քննարկման դնելու համար:

Հանձնախմբի կողմից ժողովին ներկայացվեց նաեւ Գերագույն հոգեւոր խորհրդի կանոնադրության նախագիծը, որն անհրա-

տարված աշխատանքի համար, իրենց դիտարկումները ներկայացրեցին գրասենյակի հետագա գործունեության առնչությամբ:

Ժողովի վերջին նիստին Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորման գործունեության վերաբերյալ հասնամանակի գեկույց ներկայացրեց միավորման Նախագահ Յովնան արք. Տերտրյանը:

Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության եկեղեցական համայնքների մասին գեկույցով հանդես եկավ հայրապետական պատվիրակ Վահան եպս Յովհաննիսյանը:

Առանձին քննության առկվեցին Բեզգիայի, Հոլանդիայի, Իտալիայի եւ Իսպանիայի համայնքային կյանքին առնչվող հարցեր: Այս առնչությամբ հաշվետվություններ ներկայացրեցին նաեւ Բեզգիայում հայրապետական պատվիրակի փոխանորդ Չատիկ վրդ. Ավետիսյանը եւ Հոլանդիայում հայրապետական պատվիրակի փոխանորդ Արեն վրդ. Շահինյանը:



Գերագույն հոգեւոր խորհուրդն իր գնահատանքը հայտնեց Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակին՝ ծխական համայնքների հաստատված ուղղությամբ տարված աշխատանքների համար եւ թեկնածուներին շնորհակալություններ արտահայտելով իրենց անհրաժեշտ տարում ավարտին եւ հասցվել՝ 7, իսկ ընթացքի մեջ է 18 շինարարական աշխատանք:

Ժողովի ընթացքում ներկայացվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թեմերի 2016 թ. գործունեության տեղեկագիրք եւ ֆինանսական հաշվետու գեկույցը:

Հստ այդ՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եկեղեցականության թիվը 753 է, որոնցից 52-ը՝ արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 51-ը՝ ծայրագույն վարդապետ եւ վարդապետ, 35-ը՝ արքեպ, 480-ը՝ բաժնական, 138-ը՝ սարկավազ:

2016 թ. Մայր Աթոռի բաժիններում աշխատել է 930 անձ, Հայաստանի թեմերում և Արցախում՝ 1193, Սփյուռքի թեմերում եւ հայրապետական պատվիրակություններում՝ 4005:

Մայր Աթոռի հոգեւոր, կրթական հաստատություններում ընդհանուր թվով ուսանել է 283 սան, որից՝ 100-ը՝ Գեորգյան հոգեւոր ճեմարանում, 79-ը՝ Սեանի Կազգեյան հոգեւոր դպրանոցում, 34-ը՝ Հաղիմալանի թեմարանում, ընծարարանում, 25-ը՝ Քառասնյից պատրաստման եռամյա լասարանում, 45-ը՝ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանում եւ Դավթյան օրիորդաց վարժարանում: «Եօրնեյան» հանրակրթական դպրոցի 25 դասարաններում ուսանել է 383 սան, Գեորգ Էմիլի

անվան դպրոցում՝ 270 աշակերտ: «Եօրնեյան» մանկապարտեզ հաճախել է 45 մանուկ:

Անցյալ տարում Մայր Աթոռը շարունակել է քարոզչական ընդգրկուն գործունեություն իրականացնել ազգային կյանքի տարբեր ոլորտներում՝ հանրակրթության ոլորտում, երիտասարդության շրջանում, հայրողաց տներում, ՀՀ շինված ուժերում եւ քրեակատարողական հիմնարկներում:

ՀՀ շինված ուժերում իր ծառայությունն է բերել թվով 51 հոգեւոր սպասավոր: ՀՀ քրեակատարողական 12 հիմնարկում իր հոգեւոր սպասավորությունն է բերել 11 եկեղեցական:

2016 թ. շարունակել են գործել 8 հայրողաց տները (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երեւան (Նորք), Մալաթիա, Արարկիր եւ Մանրակարգության արվեստի կենտրոն), որոնք հաճախել է 3067 երեխա: Տարվա ընթացքում հայրողաց տների կողմից իրականացվել է 266 բազ-

մաբնույթ միջոցառում: Հաշվետու տարում արդյունավոր են եղել նաեւ եկեղեցաշինական աշխատանքները: Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում նախորդ տարում օծվել է 22 եկեղեցի: Մայր Աթոռի ճարտարապետաշինարարական բաժնի կողմից անցած տարում ավարտին է հասցվել՝ 7, իսկ ընթացքի մեջ է 18 շինարարական աշխատանք:

2016 թ. Մայր Աթոռի կողմից մեծ ծավալի հոգեւոր-սոցիալական խնամատարություն է իրականացվել:

2016 թ. ապրիլյան պատերազմից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի գլխավորությամբ եւ թեմերի մասնակցությամբ կազմակերպված հանգանակությունների արդյունքում է մեկ միլիոն ԱՄՆ դոլար գումար է փոխանցվել Արցախի Հանրապետության կառավարության հատուկ հաշվեհամարին՝ ի գործակցություն արցախահայության:

Հնդկադաշ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրիան արք. Մատակյանի դիմումին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Տիրոջ Ս. Գեորգյանի նորոգության համար իր ընթացիկ բյուջեից կատարել է մեկ միլիոն ԱՄՆ դոլար գումարի փոխանցում Պատրիարքարանին: 2016 թվականին իրենց գործունեությունն են շարունակել Մալաթիայի, Արարկիրի, Նորքի, Էջմիածնի, Վանաձորի բարեգործական ճաշարանները, որտեղ օրական սնունդ է ստացել ընդհանուր թվով 1000 անձ:

Շարունակությունը՝ էջ 3



ընթացքի վերաբերյալ գեկույց ներկայացրեց «Դավիթյան» հիմնադրամի Նախագահ եւ բարեգործ Աստ Դավիթյանը: Տեղեկացվեց, որ առաջիկա ամիսներին «Մըքիկիկ ընդ Զուփանի» խորհրդակցական ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ կսկսեն անցկացվել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հարցազրույցներ, ներկայացվեցին նաեւ հարցազրույցների համար եկեղեցական ու աշ-

ժեշտ դիտողությունները եւ առաջարկները, որոնք վերադարձվեց լրամշակման:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի գործունեության մասին գեկույց ներկայացրեց գրասենյակի տնօրեն, Տավուշի թեմի առաջնորդ Բազրատ եպս Գալստյանյանը: Զննարկելով արձանագրված արդյունքները՝ ժողովականները, գնահատանք հայտնելով կա-

Վաղուց արդեն հայտնի իրողություն է, որ արդի աշխարհում օդակայաններն ու ընդհանրապես ավիացիան դարձել են այլևս ոչ թե հրաշք, այլ մեր առօրյայի մի անբաժանելի մասը: Դրանք, սակայն, ներկայացնում են մեր՝ տեխնոկրատ եւ օրեցօր ավելի մեքենայացման ենթակա հասարակության մշակութային մի կարեւոր երեք: Օդակայանում կարելի է լավագույնս տեսնել ու հասկանալ մեր դարի բազմամշակութային եւ միաժամանակ համամշակութային յուրօրինակությունը:

Առաջին հայացքից բացառիկ մաքուր հատակով, հստակ ու խիստ սահմանված կանոններով (որոշ օդակայաններում նույնիսկ երթեւեկության օրենքներով), ելուժուտի համար առկա բոլոր հնարավորություններով, ավտոմատացված լրատվական-տեղեկատվական ուղղորդող համակարգով օդակայանները՝ բոլորն էլ, ըստ էության, հաճելի վայրեր են: Դրանք մոլորակի վրա թերեւս միակ ու բացառիկ վայրերից են, երբ երկինք բարձրացողներն ու երկնքից իջողները գրեթե չեն տարբերվում իրարից՝ միախառնվելով առկա հոծ բազմությանը...

Բայց այստեղ կարելի է նաեւ երբեմն-երբեմն խորհրդածել... պատկերացնում եք, խորհրդածել օդակայանում, երբ արդեն ձեր փոխանցման մտածում ու որոշում են մեքենաները: Ինչեւէ, հետաքրքիր մի դեպ, որ նաեւ օգտակար փորձառություն էր ինձ համար, կամենում եմ այս մի քանի տողերի ընդմեջեն կիսել ընթերցողի հետ:

Արդեն անցնում էի անվտանգության համակարգի սահմանված դռնով, երբ հանկարծ սկսանդիմամյա խոսվածքին բնորոշ անգլերենով մի հարց տեսի. «Դուք քահանա՞ք, օրորորո՞ք եք...»: Հասկացա, որ օդակայանի խառնիճաղաչեց մամբրի մեջ նման հարց հնչեցնողն ուներ կրոնական, թերեւս նաեւ աստվածաբանական որոշակի պատրաստվածություն ու դաստիարակություն: «Այո՛, պատասխանեցի, - ես Հայ Առաքելական Եկեղեցու սպասավոր եմ»: Հարցառուս միջին տարիքի, բավական համակրելի դեմքով մի տղամարդ էր. ճամփորդում էր կնոջ հետ: Եվ առանց սպասելու իմ պատասխանի ավարտին՝ հետեւեց հաջորդ հարցը. «Իսկ Դուք ավելի շատ ո՞ր եք հավատում՝ Աստծո՞ւն, թե՛ քահանաներին»: Դժվար էր նկատել հարցի մեջ

ՕՂԱԿԱՅԱՆ ԿԱՄ... «Դուք հավատո՞ւմ եք քահանաներին»



թաքնված հեղանքն ու միաժամանակ հիասթափությունը: Հարցադրումը հնչեց այնպես, կարծես արդեն քննարկման ոչ ենթակա դատավճիռ էր կայացվում... Անկեղծ ասած՝ ես ինքս էլ երբեք ինձ նման հարց չի տվել: Եվ միգուցե այն պարզ պատճառով, որ ես ինքս էլ քահանա եմ...

Համենայն դեպս, հարցադրումն ու դրա հեղինակն ինձ հետաքրքիր թվացին: Մենք երկուսս էլ ակամայից հստեղիք մտառակա բազմոցին, մեզ միացավ նաեւ տիկինը:

«Իսկ ասացե՛ք, խնդրեմ, ո՞րն է Ձեր՝ նմանատիպ հարցի պատճառը», - հարցրեցի ես: Նոր ու հետաքրքիր խոսակցից մի պահ նայեց ուղիղ աչքերիս, ապա հապշտապ, բայց հատուկ նախադասություններով ասաց. «Գիտե՛ք, երբ քահանաները եկեղեցի են ժամանում մեծ ու շքեղ մեքենաներով, հազիվ բարեւում իրենց ծխականներին, պատարագի ժամանակ հետեւում աշխարհում կատարվող իրադարձություններին՝ իրենց գերմանականկից հեռախոսներով (խոսքն անշուշտ iPhone-ի մասին էր), ավելի հետաքրքրվում տարբեր բորաններում տիրող իրավիճակով, քան թե համայնքի ներքին կյանքով, այսբանից հետո, ասացեք, ինչպե՛ս կարելի է հավատալ նրանց: Ես պատարագի ժամանակ ձանձրանում եմ, վարկյաններն եմ հաշվում, որպեսզի անմիջապես դուրս գամ եկեղեցուց: Ավելի լավ է՛, թերեւս, հավատալ Աստծո՞ւն՝ միայնակ, առանձնակի, տանը կամ մեկ այլ վայրում կատարվող ա-

րդթքով, քան թե... քան թե քահանաներին, որոնք ոչ մի կապ չունեն Աստծո՛ւ եւ Նրա Եկեղեցու հետ...»: Նա այս մի քանի նախադասությունն արտասանեց այնքան արագ ու այնքան հուզված, որ մի պահ մտածեցի, թե նա ուր որ է շլջահեղծ կլինի: «Բայց...», - դեռ չէի հասցրել բերանս բացել, տիկինն ավելացրեց ամուսնուց ոչ պակաս հապշտապ եւ անգամ ավելի հուզված, միառույթ ու միաձուլ անգլերենով. «Իսկ գիտե՛ք, թե ինչ սկսեցալներ են կապված քահանաների սեռական կյանքի հետ՝ կամուրջությունից, արվամուրջությունից մինչեւ մանկապոծություն... Ի՞նչ կասեք այս մասին, պարո՞ն»: Վերջին բառն ինձ ավելի հուսահատեցրեց. ես հասկացա, որ կինն ամուսնուց ավելի ցավոտ է տանում այս ամենը՝ չկամենալով նույնիսկ «հայր սուրբ» դիմելաձեն օգտագործել: Իզուր էի ես փորձում նրանց համոզել, որ ես գալիս եմ հեռավոր մի երկրից, որտեղ առաջինն են ընկույթն քրիստոնեությունը, որտեղ կան նաեւ ամուսնացյալ քահանաներ, որոնք ունեն օրինակելի, հաշտ ու համեմունք ընտանիքներ... Նրանք չէին էլ լսում: Ինչ էլ ես աստիճանաբար անդրադառնում էի այն ծանր բեղին, այն մեծ պատասխանատվությանը, որ շնորհի հետ միասին՝ իբրեւ շղթա ու պարտագիր, դրվում է քահանայի ուսերին՝ անկախ դավանական պատկանելությունից: Հասկացա նաեւ, որ շատ հաճախ քահանան հաճույքով է ընդունում իրեն արվող «հոգեւոր» մեծա-

րանքները՝ առանց, սակայն, անդրադառնալու, որ դրանք դուռ են բացում աններելի մի մեղքի՝ մեծամտության համար, այն խնամալով, որ քահանան շատ հաճախ փոխարինում է Աստծուն հավատացյալի կախում: Հասկացա, բայց ներքուստ դեռ ընդդիմանում էի բարոյական այդ հանպատրաստից դասին:

Ամուսիններն իրենց ասելիքն ու բողոքը ներկայացնելուց հետո շատ քաղաքավարի կերպով սեղմեցին ձեռքս, առան իրենց ճամպուրկներն ու անցան անվտանգության ծառայության դռնով... Ես դեռ նստած էի բազմոցին՝ անակնկալի եկած եւ կամաց-կամաց թաղվելով դառն ու մտահոգիչ խորհրդածությունների մեջ: Բայց չէ՛ որ յուրաքանչյուր քահանա գիտակցում է, որ Աստված է փրկելու իր հավատացյալին եւ Եկեղեցին, չէ՛ որ Հիսուսն Ինքն է այդ խոստումը տվել Իր Եկեղեցուն: Եվ կամ մի՞թե բոլոր քահանաներն են այդպիսին, չէ՞ որ կան նաեւ այնպիսիները, որոնք ծառայության ու նվիրումի մարմնացում են:

Ահա այստեղ՝ իրերի այս ընթացքի մեջ, հասկացա հարցի ամբողջ ծանրությունը: Անկախ այն ժողգամայեցի՞ք՝ քահանան սրբակեցեալ՞ է, թե՛ ոչ, ապրո՞ւմ է իր հոտի կյանքով, թե՛ ոչ, նա ունի քահանայական ծառայության գայթակղության սխրդուր՝ ախտախիչ: Նա միշտ գտնվում է Աստծո՛ւ փոխարեն դատաւարան կատարելու գայթակղության շեմին: Բավ է, որ մեկ ուղղով անցնի շեմը, կիպտակի այդ համաճարակի ճիւղաներում...

Տխուր հայացքով նայեցի հեռացող զույգի հետեւից... Իրոք, նրանց հնչեցրած բոլոր մեղադրանքներից առավել կարեւորն ինձ համար առաջին հարցն էր՝ «Դուք ավելի շատ քահանաներին, թե՛ Աստծուն եք հավատում»...

Իսկ օդակայանի աշխատակցի ծայրն ազդարարում էր հերթական վերելքը դեպի երկինք՝ առանց, սակայն, նկատելու հենց նոր երկնքից իջածներին...

Շահե ծ. վրդ. ՄԱՆԱՅԱՆ

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով

Սկիզբը՝ էջ 2

«Նագազայան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոնում խնամվում է 17 դեռահաս եւ 4 մանկահասակ աղջիկ:

2016 թվականին «Իգմիրյան» բժշկական կենտրոնի կողմից

պահով ընտանիքների, նաեւ՝ ապրիլյան պատերազմի ընթացքում գոհված է վիրավորում քաղաքացիներից, սահմանապահ զինվորների ընտանիքների, ծնողազուրկ երեխաների եւ Հայաստանում հաստատված սիրիահայրերի:

կեղեցու լայնածավալ գործունեությունը ներկայացնող գեկույցը:

Գերագույն հոգեւոր խորհրդի անդրադարձ կատարեց ազգային կյանքին վերաբերող տարբեր հարցերի, այդ թվում նաեւ՝ առաջիկա խորհրդարանական ընտրությունների:

Վերջինիս առնչությամբ հանդես եկավ հայտարարությամբ:

Գերագույն հոգեւոր խորհրդի հայտարարությունը

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու տոնակարգով Մեծ պահքի խորհրդաշատ եւ աղթական օրեր է ապրում աշխարհասփյուռ մեր ժողովուրդը, ինքնաբերական, զղջումի եւ ապշխարության մի շրջան: Պահոց այս շրջանի ընթացքում՝ ապրիլի 2-ին, որը նաեւ Նվիրական օր է մեր ժողովրդի համար՝ ապրիլյան քառօրյա պատերազմի մեր նահատակ զավակների լույս հիշատակով, տեղի են ունենալու ՀՀ Ազգային ժողովի հերթական նիստերը: Կարելի իրադարձություն ազգային մեր կյանքում, շրջադարձային հանգրվան հայոց պետականաշինության մեջ: Առաջիկա ընտրություններն առանձնակի նշանակություն ունեն մեր հայրենիքի համար՝ հունավորելով անցումը նոր, խորհրդարանա-

կան կառավարման ձեւին եւ պայմանավորելով նաեւ Մայր Հայաստանի հետագա զարգացումը:

Գերագույն հոգեւոր խորհրդից դիմում է մեր Եկեղեցու զավակներին եւ ՀՀ բոլոր քաղաքացիներին՝ մասնակցելու ընտրություն-

կան ուժերին եւ առաջադրված թեկնածուներին նախընտրական եւ ընտրական գործընթացներում դրսեւորել խոհեմության, զգալիություն, փոխադարձ հարգանքի ոգի՝ բարի ավարտի հասցնելու Աժ ընտրությունները եւ մեր հայրենական կյանքը միասնաբար առաջնորդելու հայրենաշեն աստվածահաճ ճանապարհներով: Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ողջունում է բոլոր այն ազնիվ ազգան-



անհրաժեշտ բժշկական օգնություն է ցուցաբերվել հիվանդներին, բժշկախորհրդատվական օգնություն ցուցաբերելու նպատակով կազմակերպվել է բուժկենտրոնի մասնագետների կազմված արտագնա բժշկական խումբ, որ այցելել է ՀՀ մարզեր եւ Արցախ:

Հաշվետու տարում նյութական եւ դրամական աջակցություն է ցուցաբերվել Հայաստանի անա-

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը տարբեր ծրագրերի միջոցով աջակցություն է ցուցաբերել ութ հարյուր քսան միլիոն ՀՀ դրամ գումարի չափով:

Թեմերի կողմից եւ 2016 թվականին իրականացվել են հոգեւոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային բազմաբնույթ ծրագրեր:

Գերագույն հոգեւոր խորհրդից գնահատանքով ողջունեց Հայոց Ե-



ներին հայրենիքի եւ մեր ժողովրդի ապագայի նկատմամբ պատասխանատվությամբ ու նախանձախնդրությամբ: Կոչ ենք անում քվեարկել խղճի մտոց, առկա քաղաքական տարակարծությունների մեջ տեղի չտալ հուզումների, առավել եւս՝ անհանդուրժողականության եւ հակառակությունների:

Հորդորում ենք բոլոր քաղաքա-

վեր նախաձեռնություններն ու ձգտումները, որոնք ուղղված են մեր ժողովրդի բարօրության ու առաջընթացին, հայրենիքի խաղաղությանը, զորացմանն ու ապահովությանը:

Աղոթքով առ Բարձրյալն Աստված հայցում ենք Երկնավորի օրհնությունը եւ Ամենախնամ Ս. Աջի հովանին մեր հայրենիքի եւ աշխարհասփյուռ ժողովրդին:



ԿԱՅԱՆ
ԹԵՔԵՅԱՆ

Սկիզբը՝ թիվ 2-4

ԲԱԺԱՆՈՒՄ

Սկսած 1924 թ. գրված նամակներից, չնայած արտաքին հավաստիացումներին, արդեն նկատելի են Սյուրմեյանի եւ Թեքեյանի միջեւ ամառացող «անտարբերության» եւ յոկուսության» նշանները, որոնցից ամենացայտունը գրվող պատասխան նամակների ուշացումն է։ Սառեցման դրդապատճառները կարող էին տարբեր լինել։ Ամերիկայում Սյուրմեյանին կրթաթոշակով պետք է օգներ մի ոմս հայ գործակալ՝ Վառլեյը, որը թեքեյան էր խնդրել, որ օգնի։ Սյուրմեյանը որեւէ օգնություն չի ստացել եւ մատուցել է ծանր գրկանքների, ստիպված է եղել ճաշարանում ամաններ լվանալ՝ օրվա չոր հացը հոգալու համար։ Նյու-Յորքում ու հոգեկան այդ ծանր կացությունը կարող էր մղել ոչ միայն գրականության նկատմամբ աճող անտարբերության, որի մասին վկայում է իր նամակներում Սյուրմեյանը, այլեւ առհասարակ գրելու, այդ թվում է նամակներ գրելու ցանկության պակասի։

Նամակագրության ընդհատումների ու նաեւ վերջնական դադարի պատճառ կարող էր լինել ոչ միայն միասին Հայաստան մեկնելու անհրաժեշտությունը (*Վահան Թեքեյանը Հայաստանում եղել էր 1911-ին եւ 1919-ին։ Սյուրմեյանը՝ որպէս Արմաշի երկրագործական վարժարանի սան, առաջին անգամ Հայաստանում է եղել 1920-ին։ Երկրորդ անգամ Սյուրմեյանը Հայաստան է այցելել 1964-ին, երբ արդեն ճանաչված գրող էր։ Երրորդ այցելությունը տեղի է ունեցել 1970-ին*), այլեւ խորհրդայնացված Հայաստանում տեղի ունեցող քաղաքական ու ազգային սահմանափակումները, եւ ուրեմն՝ հայրենիքին ծառայելու նրանց ծրագրերի փոփոխումը։ Չէ՞ որ նման Հայաստանը չէր կարող Թեքեյանի, բայց մասնավոր Սյուրմեյանի իդեալը լինել։ Ըստ երեւոյթի՝ մեծ դեր են խաղացել նաեւ

ԿԱՅԱՆ ԹԵՔԵՅԱՆ - ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵՆԼՅԱՆ. ՄԵՐՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՆԴԱՐԱ ԲՎԺՎԱՆՈՒՄ

Սյուրմեյանի ամերիկյան դաստիարակությունն ու կրթությունը, որոնց ներքո ծեփվել է մի ուրիշ՝ ոչ երազանքներով լեցուն եւ ոչ էլ գոհողությունների ու գրկանքների պատրաստ նախկին «սեւ հող վարող» մարդը, այլ հեշտ կյանք ապրելուց զայաթկողմած արդեն «միտարացած» ամերիկացին։

Հնարավոր է՝ Սյուրմեյանն ազդվել է նաեւ Հայ կրթական հիմնադրամի կողմից, որի միջնորդը Թեքեյանն է եղել (*Թեքեյանի միջնորդությամբ Բաղդադի տիկնանց միության կողմից կրթաթոշակ է ստացել նաեւ Սյուրմեյանի եղբայրը՝ Օնիկ Սյուրմեյանը, որ Վիեննայի Միսիթարյանների մոտ երաժշտական կրթություն էր ստանում*), 1924-ից Սյուրմեյանին տրամադրված կրթաթոշակի դադարեցումից։ Ուշագրված է, որ Թեքեյանի այն առաջարկում, որ ինքն ուզում է Սյուրմեյանի բանաստեղծությունների գրքուկը հրատարակել, Սյուրմեյանը, ի շարք այլ առարկությունների, Թեքեյանի Ամերիկայից գրել է. «Ես մտերիմներու շրջանակ մը ունիմ. Ու արդեն իսկ այս շրջանակէն հոգիս անհրաժեշտ մտւոնը կ'առնէ...» (*Վահան Թեքեյանի նամակները Լեւոն Չաւէն Սյուրմեյանին, Նիւ Եորք, 1950, էջ 89*)։ Իր կապերը իսկույն հայ կյանքի հետ՝ հայերեն թերթերի, հայ շրջանակների, հայ գրի եւ այլն, Սյուրմեյանը, հնարավոր է, դրանով նաեւ յուրովի «վրեժ» էր լուծում իրեն բաժին հասած դաժն մանկության համար։

Սրանցից ամեն մեկը կարող էր վճռական դեր խաղալ Սյուրմեյանի՝ հայրենիքում ծառ տնկելու, ջրանցք փորելու ու այլ աշխատանքներ կատարելու ծրագրերից հրաժարման համար։ Նամակագրության ընդհատման այլ հիմքեր էլ կային։ 20-ական թվականների սկզբին Սյուրմեյանը թեքեյան գրում էր բանաստեղծություններ, սակայն նպատակ չունէր բանաստեղծ դառնալու։ Այդ հարցում նրա մեջ սաղմավորումներ եղել են հենց սկզբից, որոնց մասին նա ակնարկում է Թեքեյանին վերաբերող իր անգլերեն հոդվածում՝ Նշելով, որ դեռեւս Կ. Պոլսում «խաբքանք մը կ'աղաղայի»՝ ծեփացնելով, թե բանաստեղծ եմ ուզում դառնալ, մինչդեռ «Ես բանաստեղծ չեմ... պետք ունի բարեկամներու, որոնք կարենային ինձի օգնել Ամերիկա երթալու համար» («Սովետական գրականություն» ամսագիր, Եր., 1980, թիվ 1, էջ 96)։ Ուշագրված է, որ հետագայում անդրադարձնալով

այս հարցին՝ Սյուրմեյանը գրել է, որ բանաստեղծ չդառնալու իր վճռի վրա ազդել է նաեւ Պետրոս Դուրյանի՝ թոքախտից 21 տարեկանում մահանալու իրողությունը։

Սյուրմեյանական այս «խաղը» շարունակվել է նաեւ հետագա տարիներին։ Նույն հոդվածում ինքն է, որ վկայում է, թե ամեն գոհողություն «գափազանց մեծ չէր իմ ամերիկյան դաստիարակության համար» եւ որ Ամերիկայից Թեքեյանին «Երբեմն նոր գրած մեկ բանաստեղծություն կորկեր, պարզապէս գինը հաճոյացնելու համար» (*Սույն տեղում, էջ 97*)։

Ամերիկյան կյանքի ընթացքում Սյուրմեյանն արդեն հասցրել էր իմանալ, որ սփյուռքաբնակ հայ գրողը «...դասապարտված է հոգեկան սոսկալի մեկուսության» եւ ուրեմն՝ աղքատության (*Սույն տեղում, էջ 98*), մի բան, որ ոչ մի կերպ էր հանդուրժվում ու չէր մտնում նրա ապագա ծրագրերի մեջ։ Նրա կյանքի հետաքրքրությունները, ինչպէս գրում է իր բանաստեղծություններից մեկում, այլեւ թեքեյել էր դեպի «Տոսկերոնի մէջ լուսատոր»։

Որ Վահան Թեքեյանն այս ամենի մասին ինչ-որ կանխագուցումներ է ունեցել, վկայում են նրա նամակներում առկա ակնարկումներն ու արտահայտված մտավախությունները։ Իր որոշ նամակներում հույս հայտնելով հանդերձ, որ «պիտի հանձնարեմ իմ իրարու», որ Սյուրմեյանն իրեն պատճառում է «մաքուր ու տաքցող զգացում», որ «ոչինչ կայ, որ զիս կարենայ զօրացնել եւ սփոփել, ոչինչ եղեմ գտա» եւ այլն, այնուամենայնիվ Թեքեյանը նկատել է տալիս, որ «Եթէ պատահի՞ որ... դու ալ կ'ուսիսայ կ'ուսիս գէշ հասկնաս, եւ քեզ ալ զորակցեն՝ յուսահատութիւնս անդարձ կըլլայ, եւ չեմ գիտեր, թէ ինչի կրնամ կռուիլ այնուհետեւ...» (*Նամակակն, էջ 252*)։ Այդ մտավախության մի այլ արտահայտություն է Կահիրեից գրված 1925 թ. հուլիսի 29 թվակիր նամակն է պարունակում, ուր Թեքեյանը գրում է, որ «... առաջ ինձմէ պատասխան չստացած ալ կը գրեիր, մինչ հիմա, 6-7 մայիս է ի վեր, բնական գտնել կը թուխ իրարմ լուր բանդիլ... ու պէտք չես ունենար իմ գորովս...» (*Նամակակն, էջ 280*)։

Իսկ հունվարի 18-ը 1926 թվակիր նամակում էլ գրել է. «Հիմա իսկ, այս վայրկեանս, սրտես ու մտքե խոսքեր կը խուճեմ գրչիս ծայրը, ու կը վարանիմ գանոնք գրելու, ետ կը դարձնեմ գանոնք, որովհետեւ

չեմ գիտեր, թէ ինչպէս պիտի գտնեմ քեզ, չգիտեմ պիտի զգածի՞ս՝ թէ չգիտեմ քեզ անտարբեր պիտի մնաս անոնց հանդէպ» (*Նամակակն, էջ 291*, ընդգծումը - Ա. Ա.)։

«Զափազանց անտարբեր պիտի մնաս...»։ Եվ սա այն դեպքում, երբ Թեքեյանն այնքան էր հավատացել ու վստահել նրան, ապրել մեծ մի ոգեւորություն, որի մասին անգամ մի ամբողջ բանաստեղծություն՝ «Սաթէ համրիչը», գրել «Զաւենիս» ընծայական-մակագրությամբ, իր նամակներին մեկում գրել. «... դու ունենալով այդ երկուքը՝ հպարտութիւն եւ խոնարհութիւն, կամքի ու խելքի հետ միասին, եղած ես տարիքիդ ամենագեղեցիկ մէկ տղայաւոր՝ որմէ տարբերը չեմ փափաքիր եւ անելի չեմ երեսակներ» (*Նամակակն, էջ 273*, ընդգծումը - Ա. Ա.)։

Իսկ ինչ ասել Թեքեյանի այն ջանքերի մասին, որոնք նա կատարել է Սյուրմեյանի բանաստեղծությունների «Լույս զվարթ» գիրքը 1924 թ. Փարիզում (*ժողովածու ունեցել է նաեւ վերահրատարակություններ՝ Նիւ Եորք 1950, Նիւ Յորք 1972, Եր., 2014*)՝ հեղինակի տպագիր ու անտպագիր գործերը հավաքելու, խմբագրելու, իր խոսքով ասած՝ «հպումներ» կատարելու (*այդ առթիվ, օրինակ, Սյուրմեյանը 1924 թ. նոյեմբերի 22 թվակիր իր նամակում գրում է. «Յայգայիկին վրա երեւի շատ տանջվեցար զայն իր այժմյան ներկայանալի մեծին վերածելու համար, այլապէս որքան որ ես կ'իշխեմ, իմ բուն գրվածքս այնքան արժեքավոր չէր, որքան հիմա կ'ոտնամ զայն հատորիկին մէջ»*) («Սովետական գրականություն», Եր., 1980, թիվ 6, էջ 106), առաջաբան գրելու եւ իր հաշվին տպագրելու գործում։ Թեքեյանի խանդավառությունն այնքան մեծ է եղել, որ գրքի «Յառաջաբանում» Թեքեյանը Սյուրմեյանին բնութագրում է ոչ ավել, ոչ պակաս, քան «արդեն իսկ իր ինքնութիւնը ունեցող բանաստեղծ-արուեստագետ» (*Լեւոն Չաւէն Սյուրմեյան, Լոյս գուարթ, Բ տպագրություն, Նիւ Յորք, 1950, էջ 91*)։ Թեքեյանը նաեւ իր նամակներում է գերազանցաբար Սյուրմեյանի գրած բանաստեղծությունները, օրինակ, նա գրում է, որ դրանք «... ամենն գեղեցիկ, հարուստ, յուզիչ եւ կատարելաբար քերթունքներ են, որոնք կը ծաղկան թէ հայերենի եւ թէ ֆրանսերենի մէջ» (*Նամակակն, էջ 267*)։

Շարունակությունը՝ էջ 6

Ծայրագույն վարդապետական թեզի պաշտպանություն

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Մարտի 13-ին, Ն.Ս.Ս.Ս. Փարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ եւ ներկայությամբ, «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ ծայրագույն վարդապետական թեզի պաշտպանություն։

«Ս. Եվգրի Պոնտացու երկերի Կիրակոս վրդ. Եղևնիացու լուծմունքները» (ուսումնասիրություն եւ բնագրեր) թեմայով թեզ պաշտպանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Չաքարիա վրդ. Բաղդուկյանը։ Պաշտպանությունը սկսվեց միանա-

կան Տերունական արդթով, ապա խոսքով հանդես եկավ ծ. վարդապետական թեզերի պատրաստության եւ պաշտպանության հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանը՝ անդրադառնալով կատարված աշխատանքի կարեւորությունը, նախապաշտպանության ժամանակ արված դիտողություններին եւ առաջարկներին։ Հանձնաժողովի կարծիքն ընթերցեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն, թեզի ընդդիմադիր եւ բնագրեր թեմայով թեզ պաշտպանող Չաքարիա վրդ. Բաղդուկյանը՝ հրավիրելով Չաքարիա վրդ. Բաղդուկյանի բանավոր պաշտպանություն։


Չաքարիա վրդ. Բաղդուկյանի իր խոսքում անդրադարձավ թեզի նպատակին, արդիականությանը եւ գիտական նորություն, ապա պատասխանեց ներկաների հարցերին։

Բանավոր պաշտպանությունից հետո հանձնաժողովը, որի կազմում էին նաեւ Հիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապաղյանը եւ Ավետարակիայի եւ Նոր Զե-



լանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաչարյանը, դրական եզրակացություն տվեց թեզի պաշտպանությանը՝ արժանի համարելով Չաքարիա վրդ. Բաղդուկյանի ստանալու ծայրագույն վարդապետության 10 աստիճանները։ Առաջիկայում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ, հայր տուրք, ընկալյալ ավանդույթի համաձայն, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տվյալության հատուկ արարողությամբ կատանա ծայրագույն վարդապետության աստիճան։

**ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՐԻ ԷՍԽԱՍՏԻ
ՏԵՐԵԿԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**



ՄԱՆՈՒԿ
ԱՐԵՂՅԱՆ

Սկիզբը՝ 2016-ի թիվ 23-24 եւ 2017-ի թիվ 1-4
Ամփոփելով շարադրանքը՝ փոխի ծեփերը անաշտորոգ գաղափարը։ Ինչպես ասում են, Արեւմուտքը Արեւմուտք է, Արեւելքը՝ Արեւելք, ինչքան էլ «հանդիպեն» իրար, այնուամենայնիվ ոգին, ավանդույթներն ու արժեքները տարբեր են։ Եվ որպեսզի վերածնունդը պատմահասարակական եւ գաղափարազդեցիկության մի համակարգ է, արեւելյան զարգացումներն այլ են։ Ընդհանրություններով, նմանության գծերով հանդերձ՝ դրանք տարբեր ջաղաքակրթություններ են։ Իսլամական Արեւելքը, արվեստի ամենազարգացած ղոտվորումներով անգամ, չի տեսնում Նուրախի, միևնույն Արեւմուտքը՝


ընդ եկեղեցին հիմնավորապես գիշեր դիրքերը ազատ բարբեր առաջ։ Հայ իրականության մեջ, մանավանդ պետականության բացակայության պայմաններում, վերածնունդի դարաշրջան համարվող ժամանակաշրջանում եկեղեցին բնավ չգիշեր դիրքերը, քանի որ պատմականորեն չէր դրված նաեւ այդ պահանջը. անգամ թուրքական աղանդավորական շարժման տարիներին եկեղեցին վերստին հաստատուն իր տեղում էր, որի սպասավորներն էլ՝ քարոզիչ քահանայից ու վարդապետից մինչեւ եպիսկոպոս ու կաթողիկոս, ստեղծում էին հայոց միջնադարի խորապես ազգային արվեստը, գրում էին տաղեր ու առակներ, ծաղկում ծեռագրեր, հորինում հոգեւոր երաժշտու-

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

(Ժամանակը եւ առանձնահատկությունները)

թյուն ու «Սուրբ սուրբ»-ի պես երգեր։ Նրանց անմիջական մասնակցությամբ ու թելադրանքով կառուցվում էին տաճարներ ու մատուռներ, կանգնեցվում էին խաչքարեր եւ հուշատուներ։ Չուզահեռ ծաղկում էր նաեւ ժողովրդական արվեստը՝ երգը, խաղն ու խաղիկը, հայրենի ու անտունին, գորգագործությունն ու քաղաքաշինությունը։ Նոր թափ էին առնում արհեստները։ Այս հայացքը նաեւ հայ գրականության շրջանաբաժանման պահանջ է առաջադրում։ Ըստ այդմ՝ հայ գրականության նոր շրջանը պետք է սկսենք 18-րդ դարի սկզբից՝ Մխիթարյանների գործունեությունից, բայց Սալայա-Նովային, ժամանակային կապի խզումով հանդերձ, պայմանավորված մեր գրապատմական զարգացումների անկախությունից, թողնենք միջնադարում։ Սալայա-Նովան ստեղծագործական անհատականության մեջ, նկարագրով, լեզվով, գրչականությամբ, սիրո գեղագիտությամբ, աշխարհայացքով, աշուղական արվեստով նոր ժամանակների երեւոյթ է, բայց դժվար է նրան տեղ հատկացնել նոր շրջանի գրականության պատմության մեջ, որովհետեւ նրան ծնող ավանդույթների շը-

թան միջնադարում է՝ դեպի Հովնաթան, հայրեններ, Նարեկացի, Աստվածաշունչ, ինչն էլ նրան դարձնում է ոչ թե նոր շրջանի առաջին, այլ միջնադարի շրջան եզրափակող վերջին մեծ բանաստեղծ, ով, սակայն, նայում էր իրենից առաջ։ Այդպես՝ ոչ թե նորագույն շրջանն սկսող, այլ նոր շրջանը եզրափակող անունների մեջ են Յարճանյանը, Վարուժանը, Տերյանը, ովքեր, սակայն, մեծապես նախապատաստեցին գրական հաջորդ դարաշրջանի ծնունդը, որի առաջնորդը հրեղեն Չարենցն էր։ Արտառոց կարող է թվալ՝ Թիֆլիսի աշխարհաբար թողնել միջնադարում եւ Մխիթարյանների վերականգնած գրաբարով սկսել նոր շրջանը, բայց այդպես է։ Դեռ փոխի գար լեզվական հարցերի շուրջ ծավալվող գրապայքարը, որ պետք է դիտենք որպես նոր շրջանի բնականոն իրողություն։ Հայոց միջնադարյան արվեստն ունի իր դարպասների բանալիները, մեր տան դռները պետք է բացենք մեր գաղտնագրերով ու ոչ թե ուրիշների փոխ առած, ընդօրինակած թեմալուծելու գաղափարով։ Անգամ ազգայինը համաշխարհայնացնող, բայց նաեւ ուժացնող տեսություններով։



Հեղափոխություն

«Վերածնունդ» եզրույթը, երբ վերաբերում է եվրոպականին, գրել են մեծատառ, որպես դարաշրջանի անուն, երբ վերաբերում է հայկականին, արեւելյանին՝ փոքրատառ, որպես պայմանական հասկացություն։ Մեջբերումների դեպքում պահպանել են հեղինակների գրության ձևը։

Դավիթ ԳԱՄԴԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Սկիզբը՝ թիվ 3-4

Այս ամենից հետո հետաքրքիր է, թե ինչ սկզբունքով էր Արծրունի ընկնում եւ բարձր գնահատում ռոմանտիկ Բաֆֆու ստեղծագործությունը։ Գրականագետներին շատ զբաղեցրած այս հարցի վրա կարծես լույս է սփռում նաեւ Բաֆֆու մահից հետո «Մշակում» տպաված նրա «Վիպագրությունը ռուսահայերի մեջ» հոդվածը։ Այստեղ Բաֆֆին նախ մատնանշում է Արծրունիին, որն ստեղծել է իսկական դպրոց, ապա ցավով հայտնում, որ նրանից հետո չեն հայտնվել գործեր տաղանդներ, եւ վիպագրությունը մնացել է նույն դիրքում։ Այնուհետեւ Բաֆֆին հիշատակում է «Յուսուփափալը», Նազարյանցին ու նրա ստեղծած շկույն, ապա հասնում «Մշակին», որը, ըստ Բաֆֆու, «հեղեղեց հասարակությանը իր նոր կենդանացուցիչ հոսանքով»։ «Մշակի» բերած «կրիտիկական» հայացքը ոգեւորում է Բաֆֆուն. «Ինքնաբերական է ինքնաճանաչողությունը»- ասա այն դրողը եւ առաջ մղող տեսակետը, որով սովորեցրեց նա հայ հասարակությանը մտածել յուր պետքերի եւ յուր թերությունների վրա» (1889, հ. 9)։ Հետաքրքիր է, որ, Բաֆֆու համոզմամբ, «Մշակի» շնորհիվ վիպագրությունը դրվել է «ավելի ռեալական հողի» վրա։ Գրականագետները նշում են, որ պարզապես համահունչ էին Բաֆֆու եւ Արծրունու գաղափարական ծրագրերը, որ մինչեւ 80-ականները Արծրունիին հավասարապես խրախուսում էր երկու ուղղություններն էլ։ Փաստն այն է, որ այս դեպքում իրար հակասարկում էին առաջադրեւ ռոմանտիզմն ու ռեալիզմը։ Դիպում է այս առումով Լ. Ամարյանի բացատրությունը։ «Նա (Գր. Արծրունի) - Ա. Գ.) պաշտպանում է ռեալիզմի գրական ուղղությունը, սակայն տեղ թողնում նաեւ իդեալականին» ռեալիզմի գրական ուղու սահմաններում։ Հետեաքար Բաֆֆու գրական ուղղությունը՝ իդեալականի հասկացողությամբ, Արծրունին համարում է նույն ռոմանտիզմ ռեալիզմի սահմաններում» (Լ. Ա. Ամարյան, Հայ գրական քննադատություն XIX դարի 70-80-ական թթ., Եր., 1979, էջ 89)։ Այս կարծիքի համար հիմնավորում այն է, որ Արծրունին մի քանի անգամ պնդեց, որ կարելի է նաեւ ներկայացնել այնպիսի տիպեր, որոնք թեւեւ չկան, բայց հասարակության համար ցանկալի են, պարզապես պետք է

ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ «ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ ԷԶԵՐՈՒՄ (1872-1900 թթ.)

այդ տիպերը լինեն «հնարավոր եւ հավանականություն ունենան» (1881, հ. 238)։ Ավելացնենք, որ Արծրունիին «ստեղծեցիցիով», հասարակական օգտակարություն ունեցող գրականության կողմնակից էր, եւ այդ դեպքում արդեն Բաֆֆու վեպերը լրիվ տեղավորվում էին Արծրունու պատկերացրած գրականության սահմաններում։ Սա էր պատճառը, որ դեռեւս 1871-ին, երբ Արծրունիին գնահատում էր Սունդուկյանի ստեղծագործությունները, անընդհատ շեշտում էր իրական տիպերի առկայությունը, իսկ ահա, Բաֆֆու մահվան կապակցությամբ գրած հոդվածում ընդունելի է համարում նաեւ որոշ իդեալական տիպերի գոյությունը։ Նորից շեշտելով երկու տիպի գեղարվեստական գովաձեքների առկայությունը՝ Արծրունին Բաֆֆու գործերի մեծ մասը վերագրում է այն տեսակին, ուր կերտվում են «այնպիսի տիպեր, որոնք մի հայտնի հասարակության մեջ չկան, բայց որոնք ցանկալի է, որ լինեն այդ հասարակության մեջ» (1888, հ. 48)։ Պարզ է, որ այս դեպքում Արծրունին բացահայտ ընդունում է Բաֆֆու ռոմանտիկ հեղինակ լինելը, սակայն շարունակականության մեջ նա պնդում է, որ Բաֆֆու ամենալավ վեպերի մեջ («Ջալալեդդին», «Խենթը», «Դավիթ-Բեկ», «Կալեբտ») շատ բան (վեպի նկարագրական կողմը, օտարականության կյանքը եւ այլն) «վերին ժողովրդական իդեալական» իրական են։ Արծրունին թերեւս բացառություն է համարում միայն գործող տիպերի մի մասին, որոնք չնայած փոքր-ինչ չափազանցված լինելու, այնուամենայնիվ, «կատարելապես իդեալական» են։ Վերջապես ամենակարեւորը, որ Արծրունին ճշմարիտ է նկատում Բաֆֆու վեպերի հիմնական նպատակը։ «Բաֆֆիի գովաձեքների գլխավոր նպատակը մի ձգտում է, մի տեսնեցիցիա՝ ներկայացնել այն կյանքը, որ չկա, բայց որ պետք է լինեւ (հիշենք այստեղ «Խենթի» մեջ երազը), այն տիպերը, որոնք մեզանում դժբախտապես չկան, բայց որոնք գոյություն-



ԱՐԹՈՒՐ
ԱՐԹՈՒՐՅԱՆ

նը ցանկալի է մեր մեջ» (1888, հ. 48)։ Հետաքրքիր է, որ այստեղ Արծրունին ոչ միայն ընդունում է ցանկալի տիպերի ստեղծման անհրաժեշտությունը, այլեւ կերտած ազնվի՝ «թեւեւ երեակայական տիպերը կորիչ ներգործություն ունենային եւ ունեցան էլ համակրելի իդեալների միջոց ծաղկավ երիտասարդության վրա»։ Այսինքն՝ այս դեպքում Արծրունին արդեն ընդունում է, որ ռոմանտիկական կերպարներն էլ կարող են դաստիարակիչ ազդեցություն ունենալ, եւ հասարակությունն ունի նաեւ ոչ միայն իրական, այլեւ հեղեւ նմանատիպ երեակայական տիպերի կարիք։ Կարելի է ասել, որ սա այն բացառիկ դեպքերից մեկն է, երբ Արծրունին ըստ արժանավորյն է գնահատում ռոմանտիկական ուղղությունը, եւ դա պետք է դիտարկել ոչ թե տուրք իր նախկին աշխատակցի հանդեպ, այլեւ գիտակցում, որ, այնուամենայնիվ, կարեւորագույն երեակայական տիպերն ունեն կորիչ ազդեցություն, եւ գաղափար ու ոգի սերմանելով՝ իրենք էլ հա-

վանություն են ձեռք բերում ինչ-որ մի պահի իրական դառնալու։ Արծրունին իր հոդվածում համոզված էր, որ Բաֆֆին «ստեղծեցիցի» գրող էր, ծնված էր հենց այդպիսին լինելու համար։ Ուշագրավ է, որ Բաֆֆու ստեղծագործության մեջ Արծրունիին առանձնացնում է «կատարելապես իդեալական երկու վեպեր (Ռուկի աքաղաղ», «Խաչագողի հիշատակարան)», իսկ մնացած վեպերի դրական հերոսներին համարում հեղինակի հարուստ երեակայությունից» ծնված, որոնք ստեղծվել են մեզ կրթելու համար եւ իրական կյանքում գոյություն չունեն։ Մինչդեռ բացասական տիպերը, ըստ Արծրունու, կան մեզանում. «Եթե Բաֆֆիի ռոմանտների բոլոր տիպերը խիստ, անողորմ ընտադատության են թեթալիքը» նրա ներկայացրած վատ տիպերը, բոլորն էլ իրական, բնական կգտնենք, որովհետեւ նրանք կան, նրանք կենդանի են մեր մեջ» (1888, հ. 48)։ Այս ամենն Արծրունին այն համոզմանն է տանում, որ Բաֆֆին իսկապես մեծ ծառայություն է մատուցել հայ գրականությանը՝ հարստացնելով այն ազնիվ, գաղափարական իդեալներով։ Ցավոք, Բաֆֆուն տրված այս ճշմարիտ գնահատականն Արծրունին չտարածեւ ժամանակին շատ նշանավոր գրողների վրա։ Ավելին. նույնիսկ ռեալիստական մեթոդին հետեւող հայ նշանավոր գրողները (Նար-Դոս, Թումանյան, Շիրվանզադե) դուրս մնացին նրա ուշադրությունից, թեւեւ կյանքի վերջում նա փորձ կատարեց Շիրվանզադեի ստեղծագործությունը ընկելու։

Բնականաբար ժամանակի գրական կյանքը չէր սահմանափակվում միայն հայ գրականությամբ եւ «Մշակում» տպագրվող երկերով ու գրախոսություններով։ Ամենատարբեր առիթներով Արծրունին անդրադարձել է նաեւ համաշխարհային գրականությանն ու գրողներին։ Սակայն առանձնահատուկ էր «Մշակի» վերաբերմունքը ռուս գրականության նկատմամբ։

Շարունակությունը՝ էջ 7

Սկիզբը՝ թիվ 4
Հակիրճ ու դիպուկ նկարագրություններով, ինչը բանաստեղծի ոճի բնորոշ հատկանիշներից է, հեղինակը կարողանում է վերակենդանացնել իրենց առթառ, բայց ուրախ՝ Նոր տարիները՝ լինումստի եւ օգու փոխարեն ջրով լցված շշերով, թղթե շոկոլադեղներով, թղթե խնձորներով ու թղթե մանրարիներով: Նա ընթերցողին տեղափոխում է իր մանկության խաղերի եւ առաջին սիրո աշխարհը՝ դպրոցի պատերից ներս՝ դեպի ցուրտ դասարան, դասի առաջին ժամերը՝ «Թմար, Աշխարհ, Բուսաբ»: Բացվում է հեղինակի մանկության երկինքը՝ ի օդում թռնած ծիծեռնակներով, գանգերով, թվերով ու գնահատականներով սկսվող առավոտներով, պարերով ավարտվող ժողովներով, հեռավոր եղբայրսիրաներով: Ուրախ եւ անուրախ հուշերում ծնվում է «Ֆակուլտատիվ առաքյալ» համարվող «ներք, որի ետեւից ընկած, ինչպես ճանի ետեւից, / ուսուցչական կոլեկտիվը բշտում էր օրնիքուն / պայքարում քիմիական պրեպարատներով, / թակարդներով գանգաւ...» («Թղթե Նոր տարի», «Հասարակը»):

Հայ գրականության մեջ շատ են տղամարդ բանաստեղծների՝ մորը նվիրած սիրառան բանաստեղծությունները: Հոր մասին բանաստեղծությունները մեզանում այնքան էլ շատ չեն: Հավանաբար տղամարդու համար հորը բանաստեղծականացնելն ավելի դժվար է, եւ պատճառներից գլխավորը որդու՝ տարիներ հետո հորը նմանվելու կամ նրա կերպարի մեջ իր իդեալները մարմնավորելու ձգտումն է: Ինչ վերաբերում է Գրիգորյանի պոեզիային, հոր կերպարը նրա պոեզիայի կարեւոր մոտիվներից է: Նրա ստեղծագործության կենտրոնում կանգնած է հայրը, իսկ մայրը դառնում է օժանդակ կերպար:

Հոր կերպարն անբաժան է ծնողավայրի եւ մանկության հուշերից եւ ուղեկցել է նրան որոշ կյանքի ընթացքում: «Բեշտակներ մանկության երկնքից» ժողովածուի մի շարք բանաստեղծություններ հոր նկատմամբ անկեղծ եւ պաշտամունքի հասնող սիրո դրսեւորումներ են, որոնցում բավականին կենդանի երեւում է բանաստեղծի հայրը: Եվ ի տարբերություն Հովհ. Երզնկացի, որի «Հուշարձան հայրիկիս» շարքը հայ գրականության մեջ հայրեր-գուրջան լավագույն օրինակն է, Հովհ. Գրիգորյանի բանաստեղծություններում առավել է ընդգծվում հոր եւ որդու կապը:

ՄԱՆԿԱԿԱՄՈՐԻ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԿՆԵՐԸ

Հովհաննես Գրիգորյանի «ԻՐԵՆՏԱԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԻՑ» ԵԱՐՔՈՒՄ

«Ընդհանրապես, հայր-որդի-թոռ ժառանգորդական կապը կարելի էր նշանակություն է ձեռք բերում Հովհ. Գրիգորյանի պոեզիայում», - գրում է գրականագետ Պետրոս Դեմիրճյանը (նույն տեղում, էջ 131): Ահա այս ընդգծված կապն է մեզ թույլ տալիս ասելու, որ ի տարբերություն Երզնկացի գործերի, որոնցում գծագրվում է առավելապես հողագործ հոր քարոյական նկարագիրը, Գրիգորյանի բանաստեղծություններում երեւում է ոչ միայն հայրը, այլեւ հենց ինքը՝ բանաստեղծը:

Բանաստեղծի հայրը պատերազմի հետո էր, նրա մեղալիները՝ որդու հպարտության առարկան: Ահա հայրը՝ «Պատերազմի մասին ոչ մի կերպ հնարավոր չէ խոսել» համոզմունքով, ով փորձում էր հիշողությունները վառված սիգարետի հեն միասին ճնշել մոխրամառում եւ լռել: Բայց պատերազմի մասին պատմում են նրա սպիները, խոնավ հայացքը, դողդոջող մատները, անճարակ շարժումները: Հոգեբանական հետաքրքիր անցումներով հեղինակը ցույց է տալիս կնոջ ու երեխաների վերապրած խախը, ցավ ու ուրախությունը. կարծես հենց նոր էր ավարտվել պատերազմը, եւ հայրն էլ հենց նոր էր տուն մտել: Հեղինակը խոսքը կառուցում է այնպես, որ բանաստեղծությունն սկսվում է դրամատիկ շեշտով, բայց աստիճանաբար տողերի արանքից կարծես լսելի են լինում հաղթանակի բացականչությունները: Կարող ենք ասել, որ «Շարադրություն» բանաստեղծությունը դաժան պատերազմի սկզբի եւ հաղթանակված ավարտի բանաստեղծական մարմնավորումն է: Եվ եթե նրանում բացակայում են պատերազմական դեպքերի անմիջական նկարագրությունները, ապա «Ես նորից խոսում եմ պատերազմի մասին» բանաստեղծության մեջ պարզորոշ երեւում են նրա թողած սարսափելի հետեւանքները՝ միոտանի հենակավոր տղամարդիկ, թերսնված եւ թուլակազմ, գունատ ու սքեզ կանայք, հենակների ու պրոթեզների արանքում՝ կարկատած հա-



գուստով երեխաներ: Հայրը նորից տեսնում է տողերի արանքում՝ հիշողության մեջ ասֆալտին խփվող հենակների չոր թխկոխկոցը, մեղալիների զնգզնգոցի տակ տնքացող գետինը: Պատկերն ամբողջացնում են կյանքն ու մահը խորհրդանշող գույները՝ կանաչն ու կարմիրը, որոնք օգնում են ընթերցողին՝ տեսնելու հենակների հեկված տղամարդկանց արցունքները՝ կանաչ-կարմիր, զգալու հաղթանակի հրավառությունը՝ կանաչ-կարմիր:

Մանկության տարիներն անցել էին անկատ, միեւնույն կարգով՝ կարծես ոչինչ չփոխելով կյանքում.

....Եվ մինչ ըսիկ-ըսիկ ասելով՝ մեծանում էի
Լեւոնիականի փողոցներում -

անվերջ նույնն էին մյուս
Սեւյակային ծաղիկները, անվերջ նույնն
էին մյուս:

Եջ 131

Հոր ներկայությունը նույնպես տեսական մի բան էր թվացել: Հայրն անընդհատ քայլել է, որդին էլ անընդհատ չի հասել ետեւից, թվականացել, իսկ ծանրացած խողորդության պատճառով հայրը չի լսել նրան: Բայց ահա կյանքի սովորական ընթացքի մեջ ներխուժած ողբերգական բանաստեղծի հոգում առաջացնում է անդառնա-

լիության, անգործության, կարոտի ու տառապանքի զգացումներ: Կորցնելով հորը՝ բանաստեղծը հոգեկան ծանրագույն դրամա է ապրում: Նրա համար խախտվում է հորով պայմանավորված աշխարհի հավասարակշռությունը: Հոր համար ծանր էր մեռնելը, երբ աշխարհը ողորկված էր ցերեկվա պայծառ լույսերի մեջ, երբ կյանքը եռում էր իր բնական ընթացքով, ինչ-որ մի կին դիմացի պատշգամբից կախում է իր մաքրամաքուր վազքը, ինչ-որ տեղ զնգում է սխալված հեռախոսը, եւ գրուցում են երկու հոգի, վերելի հարկում շրխկոցով բացվում է դուռը, լսվում է երեխաների ճիչ ու ծիծաղը: Այս ամենն ավելի է ընդգծում երկնքի կապույտը, կարելի է ասել, ապրելու տենցն եւ միեւնույն ժամանակ՝ կորստի դառնությունը: Բայց որդին պիտի ապրեր, ինչը նրա համար ավելի ծանր էր, քան մեռնելը հոր համար: Պիտի ապրեր, որովհետեւ հայրը մահվան մահում պատվիրել էր երբեք չմեռնել («Հրաժեշտի բանաստեղծություն հայրիկիս», «Երբեք չմեռնես»):

Բանաստեղծի հորը մենք տեսնում ենք երկու վիճակում՝ հայրը կենդանի եւ հոր կենդանի ներկայությունը մահից հետո: Ու երբ հայրն այլեւ դարձրած է ապրել այս աշխարհում, որդին փորձում է հոր ֆիզիկական բացակայությունը լցնել նրա հոգեւոր ներկայությամբ: Տարիներ հետո, երբ հայրն այլեւ չկար, բանաստեղծը մեծ պահանջ էր զգում այնպիսի հորը, «խոսքը նրան հասցնելու», միզուցե շարունակելու այն տարիների կիսատ գրույցը: Բայց հայրն առաջվա պես չէր լսում, որդու համար էլ խոսելը դարձել էր անտանելի ու անհնարին: «Գյուրի, քաղաքային գերեզմանոց, հայրիկիս» բանաստեղծությունը տառապած որդու եւ քաղաքացիական բարձր գիտակցության օժտված մարդու հոգեվիճակի նկարագրությունն է: Կատար անձնական ցավը եւ ազգային ողբերգությունը արտահայտված են միաձուլվել:

Շարունակությունը՝ էջ 8



ԼԵՎՈՆ ԶԱԿԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ
Սկիզբը՝ էջ 4
Սյուրմեյանի վերոհիշյալ գիրքը, որն ամփոփում է 21 բանաստեղծություն, եւ վերնագրվել է Թեքեյանի կողմից՝ նկատի ունենալով հայկական եկեղեցիներում վաղ առավոտյան երգվող շարականի անվանումը, որը, ըստ Թեքեյանի մեկնության, պատշաճում է նաեւ հեղինակի գրական մուտքին եւ որը զարմանալի գույզադրությամբ արտահայտում էր նաեւ Սյուրմեյանի մոր անունը՝ Չվարթը: Վերոհիշյալ բարձր գնահատումները, իհարկե, գալիս էին Սյուրմեյանի նկատմամբ տածված սիրուց, քանի որ այդ գործերի մեծ

ՎԱՀԱՆ ԹԵԹԵՅԱՆ - ԼԵՎՈՆ ԶԱԿԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ.

ՄԵՐՏ ԲԱՐԵԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՆԴԱՐԱ ԲՎԺՎՆՈՒՄ

մաքը, եթե չհաշվենք մի քանի բանաստեղծություններ՝ «Կռուի երթ», «Փափագ», ուր զգալի է մեծարենցյան շունչը, «Իրիկունը նախօրե կիս» եւ առանձին պատկերներ, քիչ զեղարվեստական արժեք ունեն է լույ փաստական դեր են խաղում: Ավելի հասուն տարիքում՝ 1924-ին գրած «Անացուածք ծառ տակնելու առթիւ» բանաստեղծությունը, որն առաջին անգամ տպագրվել է «Պայքար» թերթում՝ «Հանուն Գեղունեան» ստորագրությամբ, այս գրքի միակ արժեքավոր ու մասնուն գործն է, որը եւ առանձնահատուկ ուշադրության է արժանացել Թեքեյանի կողմից. «Կարդացի եւ օրորուցեց, ծաղիկ մը պէս, անոր նուազէն, անոր ծածանքէն»: Մեծ բանաստեղծը նաեւ ուշագրավ բացահայտումներ է կատարել՝ նշելով, թե. «... վերնագիրը դրած աւտելը եթէ Չարեանի մտածած են (նկատի ունի Կոստան Չարյանի) 1922 թ. լույս ընծայած «Օրերի պատկը» գրքի «Անացուածք» շարքը - Ա. Ա.), մարմինը հետզհետեւ (եղուած պահուն, գիտակց կամ անգիտակցի խորհուրդի մէջ, եւ քիչ մը գտնուած եմ... մեղադրանք մը պետք է տեսնես այս ըսածի մէջ, բանաստեղծութեան մը համար, որուն ամբողջութիւնը դրսէ տ ամբողջովին, խորքով ու ձեւով».

Տեք, օրհնէ՛ ծառն այս մտադրա՛
Ես կը տկեն՛ գայն ահա
Փխրուն եւ սեւ հողին մէջ, ուր պատերազմ կը պառկին.
Ես՝ անոնց թողը հսկայ, այս հողին տըրն եմ կրկին,

Ու արեւուն տակ կ'աճիմ, անունն իրենց շուրթիս վրայ:


Թեքեյանը նաեւ դիտողություններ է արել բանաստեղծության մի քանի կետերի, մասնավորապես երրորդ տան երկրորդ տողի վերաբերյալ՝ նշելով, որ «Երկրին իմ քար ու գիր է, որուն ես թոռն եմ վայրի» ձեւակերպումն ունի անհնաշող վերջաբառ՝ վայրի՝ մանավանդ բանաստեղծության «սքանչելի վերջին տողին մոտ», որը գալիս է կրոնական պաշտամունքի ուժեղ կնիքը դնելու քերթվածին (*Նամակակի, էջ 256-257*):

Այդ բառի վերաբերյալ հարկ է ասել, որ բառագույնգործումը գալիս է մի կողմից դեռեւս 1923-ի հունվարի 22-ի՝ Վ. Թեքեյանին ուղղված նամակում արտահայտված մի ձեւակերպումից. «Հիմա նպատակ է մեծնալ մաքրությամբ, ուժով ու ավելցած շնորհներով» (չափերների մեջ առնված խոսքը Թեքեյանինն է - Ա. Ա.), որպեսզի վաղը վայրի ծիեր հեծնող տղուն մը նման կանգնիմ առջեւ գինվորի մը նման...» (*Սովետական գրականություն» ամսագիր, Եր., 1980, թիվ 6, էջ 101*): Սյուն կողմից՝ Թեքեյանը «Լույս զվարթ» իր «Յառաջաբանում» գրում է, որ նախկինում գրված եւ իրեն ուղղված նամակներից մեկում Սյուրմեյանին ինքն իր մասին գրել է. «Հիմա ես կատարող տպալ մըն եմ» (*Հասան Թեքեյանի նամակները Լեւոն Զաւեն Սյուրմեյանին, Լիւ Շորը, 1950, էջ 89*), որն այս բանաստեղծությունում ձեւակերպված «որուն

ես թոռն եմ վայրի» տողի ոչ այնքան հեռու տարբերակն է:

Թեքեյանի տուրը աչքից դուրս չի մնացել բանաստեղծության առաջին տան մեջ մեկ հանգի պակասը եւ երկրորդ տան մեջ մեկ ավելորդ հանգի առկայությունը: Թեքեյանը դրականական խոսքեր է ասել նաեւ «Վերջին աղոթք» բանաստեղծության վերաբերյալ, որը Սյուրմեյանը գրել է դեպի Ամերիկա գնալիս նախի մեջ. // «Այս իրիկուն իմ հոգիս եկեղեցի մ'ե ընկալա՛: Պատարագէն վերջ թափուր...»: Թեքեյանը երբեք մի էր կողմ է դրել իր զգայական մոտեցումները Սյուրմեյանի գրածների վերաբերյալ եւ հանդէս եկել որպէս անկողմնակալ գրադատ: Սյուրմեյանին ուղղված որոշ նամակներ ցույց են տալիս, որ Թեքեյանը չի հավանել Սյուրմեյանի այս կամ այլ բանաստեղծությունը. տողը, պատկերը, ընտրած բառը: Այսպէս՝ 1923 թ. մարտի 6 թվականի նամակում, օրինակ, նա գրում է. «Ուսանալորի երկրորդ variente-ն (տարբերակը - Ա. Ա.) ալ առի. առաջինն շատ տարբեր չէ... քեզի պիտի յանձնարարւն, որ առաջիմ ճիշ չլնես բանաստեղծութիւն գրելով» (*Նամակակի, էջ 223*): Թեքեյանը խորհուրդ է տալիս «արձակ խօսքեր, յուշագրի պէս բան մը» գրել, մի բան, որը, որքան էլ զարմանալի թվա, հետաքայլում հենց համբավ բերեց Սյուրմեյանին:

Շարունակելի
Արթուր ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



«Նկարչի վրձնահարվածները ծնունդ են առնում նրա անուրջներից: ... Փորձելով հետազոտել անհայտը ու այն, ինչ գտնվում է առօրեականի սահմանագծից այն կողմ, ես արարում եմ մի ներքին հավերժություն: Ես նկարում եմ շնչող լեռներ, բույսեր ու կենդանիներ, դրանց խառնուրդներն ու հակադրությունները: Այս ամենը հանդիսանում է մեր ժողովրդի երեակայության արգասիքը: Ես ջանում եմ ուղղակիորեն որսալ այդ ամենը, ավելի կոնկրետ նկատի ունեմ մեր ազգի ֆուլկլորը եւ մեր հայրենիքի ֆիզիկական գեղեցկությունը: Վերջիններս նյութ են դառնում իմ կտավների համար»,- մի անգամ գրել է Արշիլ Գորկին (տե՛ս Mooradian K., ed., «The Letters of Arshile Gorky», էջ 29):

Արշիլ Գորկին իր կարճատև կյանքի ընթացքում, շնորհիվ իր կարգապահության, անասան մնաց ընկճախորի եւ ծախողումների ընթացքում եւ խորասուզվեց իր հիշողության ամենախոր խորշերի մեջ: Նույնիսկ անփորձ աչքը, որն անվարձ է արդի արվեստի ոճը տեսնելու հարցում, միեւնույն է, ունակ է խորհրդածությունների միջոցով մուտք գործելու կարոտխառն ու գեղեցկության այն տիրույթը, որ նկարիչը պատկերել է իր կտավներում: Գորկու վերջին գլուխգործոցներին մեկը, որը կոչ-

ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ ԱՐՎԵՍԻ ԵՆԹԱՏԵՐԱՏԸ

վում է «Գութանը եւ երգը», կարծես ճաշակով է գույներ ու շարժում: Կտավում պատկերված գեղարվեստական ձևերը ծանրաբեռնված են զանազան իմաստներով, որոնց մատնացույց են անում այն հավերժական իրողությունները, որ արվեստագետը սիրում էր բացահայտել: Ամբողջ պատկերը ներծծված է արեալյին արգասաբերությամբ, իսկ վերջինս անհրաժեշտ է կնոջ եւ տղամարդու միաձուլման համար: Գորկու կտավում բույսերի ու կենդանիների պատկերները միավորվում են իրար: Այդ պատկերները կարծես սև-վում են հողից եւ թեւեր առնում: Իսկ ժպտացող շուրթերը տանում են մեզ դեպի նկարչի ստեղծագործական աշխարհի խորքային մասերը: Այս արտասովոր ստեղծագործության կենտրոնական հատվածում առկա է մի ոսկեգույն դեմք, որն իր շնչով մի տրեւ է ըջում դեպի խորքային մասը: Վերջինս հանդիսանում է Նոր գենեզիսի կրկնօրինակը: Արվեստագետի ստեղծած պատկերն ապրող երագի կամ էլ սիրո շնչի պես պարունակում է այն ամենը, ինչին նա ջանացել է հասնել: Գորկին իր ստեղծագործական երեակայության միջոցով ծնունդ է տվել մի Նոր Հայաստանի, որը պարզապես ցնցվում էր հակադրություններից ու հակասություններից:

Արշիլ Գորկու ստեղծագործություններում եւրեւան են գալիս հայրենիք երկրի կերպարներն ու տեսարանները: Սա կատարվում է նկարչի առաջադեմ վերացական էքսպրեսիոնիզմի միջոցով: Խիստ ու պայծառ գույներն ու անմիջական ուրվագծերը կարծես սնունդ են հանդիսանում նկարչի սիրելիների համար: Արվեստագետի ոգեւորությունն այդպես էլ չբացահայտվում էր, որը կյանքի ընթացքում: Նա մշտապես անընդուն էր իր հայրենիքի մասին: Հաճախակի անդրադառնալով իր երեզանքներին՝ արվեստագետը գրում էր հետևյալը. «Ես ամենը երագում եմ իմ

հայրենիքի մասին: Դա կարծես իմ մեջ բուն դրած մի հնադարյան ոգի լինի, որը ձեռքերիս շարժում է հաղորդում՝ հնարավորություն ընձեռելով արարել տարագրության պայմաններում: Ես պատկերում եմ այգիների մեր կողմից սիրված գեղեցկությունը, ցորենի արտերն ու հորդոմուն գտնվող Ադրյանների մրգատու այգիները» (Նամակ 32): Այլ նամակներում նկարիչն անդրադառնում է իր զգացողություններին, որոնք կապված են հարազատ երկրի հետ: Այդ զգացողությունները կարծես շոշափելի լինեն: Արվեստագետն անդրադառնում է Վանա լճի աղի ջրերին, հարազատ խաչքարերի զարդանախշերին, խնոցների ու գութաններին: Այս ամենը կարծես փոխկապակցված են: Հայկական արվեստի միախառնությունն ու հակադրությունները աշխուժություն էին հաղորդում Արշիլ Գորկու կենդանությունն առնող անուրջներին եւ խթանում նրա ստեղծագործական միտքն ու ընդհանրացումներ կատարելու նրա ունակությունը:

Ինչպես փաստվում է Գորկու նամակների ընթերցմամբ եւ նրա ստեղծագործությունների ուսումնասիրմամբ, նրա ուղին դեպի նկարչական վարպետություն բավականին վաղ է սկսվել: Արվեստագետի վարպետությունը հատկապես ցայտում է դրսեւորվել նրա «Գութանը եւ երգը» կտավում: Գորկու կտավները վառ են, արտահայտիչ ու կրքոտ: Այդ նկարները բացահայտում են մի մարդու, ով տեսնում է սինթեզի ենթադրել լավագույն ազգային ավանդույթները լավագույն արդի ավանդույթների հետ: Նկարիչը կարծես առաջ է մղում այդ երկուսի սահմանագծերը՝ նոր իմաստներ ստեղծելու նպատակով:

Արշիլ Գորկու իսկական անունը Ռուստիկ Ադրյան էր: Նա ծնվել էր 1904 թ.: Գորկին սերում էր ազնվականական ակունքներից: Նրա նախնիների մի մասը եղել է ինքնագործ դարի Վարդանանց պատեհագործ մի ամսականներ, իսկ մյուս մասը՝ ե-

րեսունութ սերունդ շարունակ, հոգեւորականներ (տե՛ս Mooradian K., «The Man from Van», Ararat 11 (fall 1971), էջ 7): Արվեստագետի մայրը մի հայարտ ու արժանապատիվ կին էր, ով մեծ կարեւորություն էր տալիս ընտանիքին, քանի որ այն համարում էր ազգային ու մշակութային հարատևման կարևոր բաղադրիչ: Արշիլի մայրական կողմի պապը քահանա էր, ով տնօրինում էր նրանց տոհմային վանքը՝ Ս. Աստվածածինը: Այն գտնվում էր տասը հազար ոտնաչափ բարձրություն ունեցող մի լեռան ստորին մասում եւ իրենից զգալի պատմական արժեք էր ներկայացնում: Վանքի անցուղիներում առկա էին դասական հայերենով կատարված արձանագրություններ, որոնք ողջունում էին այցելուներին: Կառույցի որմնաքարերին տեղակայված են մտախոհ հայոց արքաների պատկերներ, ինչպես նաեւ կրոնական կյանքի վերաբերող պատկերներ: Որմնախորշերին առկա են երեք հազար տարվա վաղեմություն ունեցող սեպագիր արձանագրություններ, որոնք այցելուներին հիշեցնում են իրենց քրիստոնեական անցյալի մասին:

Վանքից հինգ մղոն դեպի արեւելք գտնվում է Խորգոմը՝ Արշիլ Գորկու ծննդավայրը: Խորգոմը նույնպես տոգորված է առասպելներով: Զարաթի միջով անցնում է Շամիրա՝ երեք հազար տարվա պատմություն ունեցող ջրանցքը: Հետագայում, երբ նկարիչը հայտնվեց մեծերի կայուն, խոսեց այն մասին, թե ինչպես է իր ծննդավայրի ջրանցքն ազդել տարածական հեռանկարի իր ընկալման վրա: Գորկին նկարագրել է դրա ուժգին ազդեցությունն իր վրա՝ ի հակադրություն ոգեւորությունից գուրկ մեծերի կային ազդեցության: Գորկու համոզմամբ՝ ռոմանտիկ ջրանցքները հայկական բաղադրությունն են ակունքներն են, եւ արվեստագետը դրանցից կարող է շատ բան սովորել (Նամակ 30):

Հարյուրամյակները՝ էջ 8

ԳԵՂԱՐԿԵՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ «ՄԵՐԱԿ» ԼՐԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ (1872-1900 թթ.)

Սկիզբը՝ էջ 5


Համբավավոր խմբագիրը հայ ընթերցող հասարակությանը հորդորում է անտարբեր չլինել ռուս գրականության նկատմամբ, որի համաճարել ներկայացուցիչներից էր համարում Պուշկինին, Լերմոնտովին, Եկերասովին, Գրիբոյեդովին, Գոգոլին, Տուրգենևին, Տոլստոյին, Զեյդլինին, Օստրովսկուն եւ այլոց: Եթե Գոգոլի հետ Արծրունին կապում էր Ռուսաստանի հասարակական վերածնունդը (1878, հ. 123), ապա բոլոր այն գրողները, ովքեր հետևում էին անխնայ ինքնաքննիչ ուղղությանը, համարվում էին Գոգոլի դպրոցի ներկայացուցիչներ: Իհարկե, այստեղ Արծրունին հայտնություն էր անում, այլ ընդամենը վերահաստատում էր ռուս գրաքննադատության մեջ (Բելինսկի) ընդունված տեսակետը: 1883-ին «Մշակի» 116-րդ համարում Արծրունին այն միտքն է հայտնում, թե վերջին տարիներին ռուս գրողներից միայն Տուրգենևին եւ Զեյդլինին է հաջողվել դառնալ «Ռուսաստանի հասարակական կյանքի բոլոր օրական պահանջներին եւ կենսական խնդիրների արտահայտիչ»:

Արծրունու համար ամենաեականն այն էր, որ գրողներն իրենց ստեղծագործություններով վեր հանեն հասարակական ախտեր եւ ենթարկեն անխնայ քննադատության, լինեն սեփական ժողովրդի օրախոսի հարցերի արձագանքողը: Նույն հոգվածում բարձր է գնահատում նա Տուրգենևի գրեթե բոլոր գործերը (բացառություն է համարում միայն երկու-երեք ամենավերջինները) հենց այն

բանի համար, որ դրանցում միշտ արտացոլվել են «ռուսաց կյանքի ժամանակակից հարցեր», հասարակական կարեւոր հեղեղություն ունեցող հիմնախնդիրներ: Դեռեւս այս հոգվածից երեք տարի առաջ՝ 1888-ին, Արծրունին «Կույր» դրամայի գրախոսության մեջ (1880, հ. 10), խոսելով թատրոնի եւ գրականության դաստիարակիչ դերի մասին, վկայակոչում է հենց ռուս գրողներին, որոնք անմիջապես նկատում են հասարակության «օրվա պահանջները, խնդիրները» եւ անմիջապես արձագանքում են. «Երբ որ Ռուսաստանում հարուցվեցավ ճորտերի ազատության խնդիրը, Տուրգենևը գրեց «Записки охотника», երբ որ հայտնվեցան Ռուսաստանում նոր ձեւի մարդիկ, այսինքն խոսքի, բայց ոչ թե գործի մարդիկ, ռուս երեւելի հեղինակը ստեղծեց իր «Рудин» տիպը, երբ նիկիխստների տիպը էր հայտնվեցան ռուս հասարակության մեջ, Տուրգենևը գրեց «Отцы и дети» ռոմանը, որի մեջ մտրակեց այդ տեսակ երիտասարդությունը՝ Բազարովի տիպը ներկայացնելով» (1880, հ. 10): Ցանկն Արծրունին էլ է շարունակում՝ մե մեկ անգամ նշելով, որ Տուրգենևը (իիշատակում է նաեւ Պոստելինի եւ Դիաշենկոյի անունները) գիտի ժամանակին արձագանքել «օրական հարցերին» եւ անխնայ քննադատության ենթարկել հետադիմական ուժերին: Անխնայ քննադատող ոգու համար է Արծրունին բարձր գնահատում նաեւ Զեյդլինի ստեղծագործությունը, որ կարողացել է արթնացնել թմբած հասարակությանը. «Ռուս սատիրան, ռուս

երգիծաբանական գրական ձեւը Զեյդլինից առաջ երեք չէր հասած այն վեճ ընդարձակության, երբեք այդքան խոր կերպով չէր թափանցել, չէր մտել ժողովրդի բոլոր խավերը, որպես այդ կարողացել է անել երեսուն տարի շարունակ Զեյդլինի մերկացնող, անխնայ մտրակող սատիրան» (1889, հ. 49): Իրավացի էր Ա. Բաբխանյանը, երբ նկատում էր, որ հենց Մալուխով-Զեյդլինի պակաս էր զգում հայ գրականության մեջ Արծրունին, քանի որ վերջինիս կողմից «վայրի ավանդույթների անխնայ քննադատությունը կոզներ հասարակության առաջընթացին» («Литературная Армения», Ереван, 1961, թիվ 11, էջ 105):

Չնայած Արծրունին չէր խրախուսում թարգմանական դրամաների բեմադրությունը հայ բեմում, այդուհանդերձ որոշ վերապահում էր անում ռուս հեղինակների կատմամբ՝ նրանց մեջ էլ հատուկ շեշտելով Օստրովսկու բարձր տաղանդը: 1891-ին Արծրունին «Մշակի» առաջնորդողներից մեկում գուժում է ռուս գրող Անդեյարովի ահաբ: Արծրունին հատկապես բարձր էր գնահատում Անդեյարովի վեպերում իրական ռուս կյանքից վերցված կերպարների առկայությունը՝ մասնաճյուղի հեղինակի հատկապես «Օբլոմով» վեպը, որն այնպես տիպական է ու ընդհանրական, որ դարձել է համապատասխան երեւույթների (հասարակական ծնություն, անշարժություն, անհոգություն) մարմնավորողը: Ի վերջո, ըստ Արծրունու, Անդեյարովը ոչ միայն հասարակական խնդիրներ էր առաջ քաշում,



ՀՊԿՄՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

այլեւ հենց իր վեպերով առաջացնում դրանք՝ անսպառ նյութ տալով նաեւ քննադատներին:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ ընդհանրացնենք, որ Արծրունին իր գրական գործունեության ավելի քան քսանհինգ տարվա ընթացքում ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ ժամանակի գրական կյանքին՝ ավելի կամ պակաս չափով արձագանքելով այս կամ այն գրական երեւույթին: Այդ գործունեության վրա տեղ էր զգում միայն 80-ականների վերջերի սկսած ավելի շատ ոչ գրական արձագանքները, երբ Արծրունին չտեսավ կամ չկարողացավ կատարել ժամանակի նշանավոր գրողների մուտքը (Թումանյան, Նար-Դու, Շիրվանզադե, Հովհաննիսյան, Դոշյան, Մուրացյան), ինչն էլ պատճառ դարձավ, որ մի քանի գրական միջակություններ նշանավոր գրողների փոխարեն հռչակվեին որպես ճշմարիտ վիպագիրներ:

Արշալույս զԱՆԱՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԱՐԵՎԻԼ ԳՈՐԿՈՒ ԱՐՎԵՍՏԻ ԵՆԹԱՏԵՔԱՏԸ

Սկզբը՝ էջ 7

Արշիլ Գորկու մտքում ամրապայվել էր եւս մեկ հնադարյան սրբատեղի. դա Աղթամար կղզու վանքն էր: Կառույցը տեսանելի էր քարքարոտ բարձունքից, որից տեսարան էր բացվում դեպի Վանա լիճը: Կղզին հանդիսանում էր հանրահայտ առասպելի գործողության վայրը, իսկ դրա վանքը՝ Ս. Խաչը, հայկական եկեղեցա-

շուր երեխաներին: Մինչև 1915 թ. Գորկին դարձավ ոչ միայն իր ազգի մաքառումների ականատեսը, այլև մոր չարչարանների վկան: Այդ հերոս կինը ստիպված էր հաղթահարել կյանքի դժվարություններն առանց ամուսնու օգնության: Արշիլ Գորկու ընտանիքը, խոսյա տալով թուրքական վայրագություններից, ուղքով հասնում է Երեսն: Նրանք կտ-

1971): Մայրը հայտնվում էր նկարչի կտավներում վճռորոշ պահերին: Այդ նկարները վկայում էին արվեստագետի անբռնազբոսության, իսկ երբեմն էլ՝ մեկուսացվածության զգացումի մասին, որ նրան տիրել էլ երկրորդ հայրենիքում:

Մոր վախճանից հետո Գորկին եւ քույրը մեկնեցին Ստամբուլ, իսկ այնուհետեւ՝ մեկ տարի անց, տեղափոխվեցին Ամերիկա: 1920 թ. մարտ ամսին նրանք հասան Էլիս կղզի: Ամերիկայում Արշիլը կատարում է զանազան աշխատանքներ՝ իր հասնապագայի հացը վատարկելու համար: Չուգահեռաբար նա զբաղվում է ինքնկրթությամբ՝ արվեստին տիրապետելու նպատակով: 1925 թ. Գորկին ժամանում է Նյու Յորք: Այստեղ նկարիչը իր անցյալը թաքցնելու նպատակով, վերցրեց Գորկի կեղծանունը, որ ուսերեն նշանակում է «դառն»: Իսկ Արշիլը Աբիլեն անվան տարբերակներից է: Գրանդ Սենթրալ արվեստի դպրոցում Գորկին շարունակեց կատարելագործել իր հմտությունները: 1920 թ. կեսերին Գորկին վճռեց լիովին նվիրվել նկարչությանը: Մինչև 1929 թ. նա աշխատում էր դպրոցում եւ դասավանդում էր մասնավոր աշակերտների: Մեծ Դեպրեսիայի տարիներին արվեստագետը զբաղվում էր նկարչությամբ, իսկ ավելի կոնկրետ՝ նա պատկերազարդում էր Զատարակյան արվեստների վարչության պատերը: Մոտավորապես նույն ժամանակ գոյություն չունեին: Արշիլն այդպես էլ չկարողացավ մոռանալ նրան: Նա իր կտավներում պատկերում էր մորը եւ դա անում էր ողջ սրտով: Այդ կինը գեղեցկուհի էր, ով եկել էր Վանա Ուտանից» (տե՛ս Mooradian V., interview with Karlen Mooradian, Ararat 11 (fall

տում էին միավորվել այլ երկրների մոդեռնիստական շարժման հետ: Այդ մոդեռնիստները թե՛ տեսականորեն եւ թե՛ գործնականում հակադրվում էին պահպանողական սոցեալիզմին եւ ռեգիոնալիզմին, որոնք ժողովրդականություն էին վայելում Ամերիկայում սոցիալական անկայունության շրջանում, իսկ Արշիլ

իրականություն չդարձավ:

1946 թ. տեղի ունեցած հրդեհը ոչնչացրեց նկարչի քանակի կտավները: Ի լուրմ կատարվածի՝ հայտնաբերվեց արվեստագետի ծանր հիվանդությունը՝ աղիքի ջաղցկեղ: Այն լիովին իյուծեց մեծ նկարչին: Սակայն Գորկու փորձություններն այսպեսով չեն ավարտվում. նա ավտովթարի է ենթարկվում, ինչի արդյունքում վնասվում են պարանոցն ու աջ ձեռքը, նրան լքում է կինը, ինչն էլ խոցում է նրա արժանապատվության զգացումը: Այս ամենը շրջանում ստեղծված գործերն արտացոլում են նրա անծ-



կան ճարտարապետության գլուխգործոցներից էր: Գորկու զարմիկ Կարլեն Մուրադյանը, ամփոփելով վերը նկարագրվածի ներազդեցությունը նրա վրա, գրել է հետևյալը: «Արշիլի մանկության տարիներն անցել են բաց երկնքի ներքո գտնվող պատմական թանգարանում, որը լիովին շրջապատված էր բնությամբ» (տե՛ս Mooradian K., նույն տեղում, էջ 2):

Արշիլ Գորկու հայրը վաճառական էր եւ ատաղձագործ: 1908 թ. փախչում է թուրքական կոտորածներից՝ թողնելով իր կնոջը եւ

րեւանցել էին Արարատյան դաշտավայրը, որտեղ քնած էր պահպանվեց: Շուտով մահանում է ընտանիքի մայրը: Արշիլի քույրը նկարագրում է, թե ինչպես էր մոր վախճանն ազդել եղբոր վրա. «Գորկու համար մայրիկն աստվածուհի էր, եւ նա այլեւ գոյություն չունեին: Արշիլն այդպես էլ չկարողացավ մոռանալ նրան: Նա իր կտավներում պատկերում էր մորը եւ դա անում էր ողջ սրտով: Այդ կինը գեղեցկուհի էր, ով եկել էր Վանա Ուտանից» (տե՛ս Mooradian V., interview with Karlen Mooradian, Ararat 11 (fall

Գորկու արտաբանական իրադարձական կիրառումն առանցքային դեր ուներ նրանց էվոլյուցիայի ընթացքում:

Երբ սկսվեց Երկրորդ աշխարհամարտը, Գորկին առաջարկեց սկիզբ դնել մի նկարչական դասընթացի, որի նպատակն էր սովորեցնել, թե ինչպես է պետք համապատասխան գունազարդման միջոցով քողարկել զինվորականներին եւ նրանց տեխնիկան՝ դրանց առավել անտեսանելի դարձնելու նպատակով: Ինչեւ, Գորկու ցանկությունն այդպես էլ

նական հոգեվարքը: «Նշանադրություն» կոչվող կտավը, որ նկարչին ստեղծեց իր փրհախտությունից հետո, կարծես իրենից ներկայացնում է իր հարգանքի տուրքը ընտանիք սահմանափակ հանդեպ: Արշիլ Գորկին ամենավերջին կտավը՝ «Սեւ վանակներ» կամ «Վերջին կտավը», ստեղծել է ռեգեյնջվելով Չեխովի նույնանուն ստեղծագործությունից:

Շարունակելի

Տիգրան ՄԱՆՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՄԱՆՈՒՄՅԱՆԻ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԵՐԸ

Հովհաննես Գրիգորյանի

«ԻՐԵՆՏԱԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՔԻՅ» ԵԱՐՔՈՒՄ

Սկզբը՝ էջ 6

Բանաստեղծին տանջում է ոչ միայն հոր բացակայությունը, այլև պատերազմական տագնապալի մթնոլորտը, իր ժողովրդի սոցիալական դրությունը. օրվա մի կեսը հացի հերթում եւ միտինգներում անցկացրած հայրենակիցներ, թաղման տխուր թափորներ, եւ որ ամենասարսափելին է, հարազատ ժողովրդի հոգեւոր անկում: Այս իրողությունները բանաստեղծի հոգում լռեցնում են անձնական ցավը, բացահայտում մեծ մարդասերի եւ հայրենասերի նկարագիրը: Հայ եւ համաշխարհային գրականության մեջ շատ գրողներ էլ հուզել մահվան առեղծվածը: Մոտալուտ մահվան կանխագգացումներն իրենց բանաստեղծություններում պատկերել են շատ բանաստեղծներ (Պ. Դուրյանը, Մ. Մեծարեղը, Վ. Տեյրյանը, Եղ. Չարենցը, Պ. Սեւակը եւ այլք): Այս թեմային անդրադարձել է նաեւ Հովի. Գրիգորյանը: «Մահը մի ամբողջ մտով էլ գծում Գրիգորյանի պոեզիայում, մահը հոր կերպարով եւ նրա մահից հետո»,- գրում է գրականագետ Ս. Սարիյանը (Մեղրեղ Սարիյան, «Պայմանական աշխարհի բնաստեղծը», «Գրական թերթ»,



2007, թիվ 2): Մահը մեզ ներկայանում է նաեւ բանաստեղծի կերպարով, եւ Գրիգորյանի մահերգությունն այլ է: Հիշյալ բանաստեղծների երկերում նկատվում են բողոքի ալիք, սիրելու, ապրելու, չմոռացնելու մեծ ցանկություն: Իսկ Գրիգորյան բանաստեղծը, ով ըմբոստանում է հոր մահվան դեմ, զարմանալիորեն իր մահվան մասին խոսում է արդեն իսկ դրան հոգեբանորեն պատրաստ, ներքին հանդարտությամբ, առանց տագնապի՝ հաս-

կանալով կյանքի անցողիկությունը, մահվան անխուսափելիությունը, կյանքի շարունակականությունը, որորն ապրելով՝ հոր հարատևությունը: Ավաճի վկայությունը կարող է դառնալ քնասուլ, չմոռացնելու մեծ ցանկություն: Իսկ Գրիգորյանի հետ որդին լանդադ-դանդը խղիվում է հողի մեջ, դառնում արմատներով հողին ամուր կաշած մի ծառ՝ խորհրդանշելով հայր-որդի-թոռ ժառանգորդական ամուր կապը («Երբեք չմեռնես», «Սովորական

մի ծառ»): Ինչպես շատերը, Գրիգորյանն էլ հանգում է այն մտքին, որ մարդու մահով սկսվում է մեկ այլ կյանք. ուրեմն աշխարհին անվերջ կրկնություն է: Բայց դժվար է հասկանալ՝ հոր մահվան փա՛ստն է նրան մղել գրելու անցողիկ կյանքի եւ մահվան փոխհարաբերության մասին, թե՛ դա ուղղակի միջոց է հավիտենական այդ փիլիսոփայության անդրադառնալու: Ինչեւ, Գրիգորյանի երկերը կյանքի եւ մահվան մասին հետաքրքիր խորհրդածություններ են, որոնց զուգահեռները հանդիպում են նաեւ «Գերեզմանի» վիպակում: Դարձվում է, որ մահվան ու կյանքի մասին ունեցած հեղինակի դատողությունները պայմանավորված են նաեւ գյուղմեջների աշխարհընկալմամբ: Գրիգորյանը գրում է. «...Նրա (Գյուղմեջ - Մ. Դ.) բնակիչները քիչ է ասել, թե խոր հարգանք, մեծ պատկառանք ու երկյուղածություն ունեն մահվան աշխարհի նկատմամբ, ուր ամեն ինչ հաստատուն ու կայուն է, իսկ այս ցեխագունը, ուր մեք իբր պարոտ ենք իսկական կյանքով, փոշու ու խաբիւով կիսավայրաբան են» (Հովհաննես Գրիգորյան, «Գերեզմանի», Եր., 2013, էջ 89):

Այս հատվածներում մեր առջեւ գծագրվում է մեծ հավատացյալի նկարագիրը, ով համոզված է, որ մարդու իսկական ազատությունն սկսվում է հանդերձյալ կյանքում, որտեղ նա իսկական տանտեր է, իսկ պատերազմներով, անարդարություններով, թույլով ու ատելությամբ լցված մարդկանց աշխարհում՝ ժամանակավոր հիյուր: Եվ մարդն իրեն սահմանված ժամանակը պիտի ապրի առանց հոգու վրա մեղք կուտակելու՝ չխախտելով Աստծու ստեղծած ներդաշնակությունը... (տե՛ս նույն տեղում, էջ 118):

Շարունակելի

Մարին ՂԱՇՏԱՅԱՆ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկաթաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտասարդ Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Մուսաբյուրյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am

astghnistan@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Մտոր. տպագր. 16.3.2017 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ